

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**



Strasbourg, 13 February 2017

ACFC/OP/IV(2016)006

Ամփոփ նկարագիր

Հայաստանի Հանրապետությունում մեծամասնություն կազմող բնակչության եւ ազգային փոքրամասնությունների խմբերի միջեւ հիմնականում տիրում է հանդուրժողականության եւ երկխոսության մթնոլորտ: Սոցիալ-տնտեսական դժվարությունները շարունակում են զգալիորեն ազդել երկրի բնակչության մեծ մասի վրա՝ հատկապես մեկուսացված լեռնային տարածքներում, որտեղ բնակվում են մեծ թվով՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք: Այնուամենայնիվ, չնայած տնտեսական դժվարություններին, Հայաստանը վերջերս ընդունել է ավելի քան 20 000 անձ, որոնք լքել են Սիրիան հակամարտության պատճառով:

Իշխանություններն աշխատանքներ են տանում ազգային փոքրամասնությունների պաշտպանության ապահովման եւ դպրոցներում ասորերեն, քրդերեն, ռուսերեն եւ եզդիերեն սովորելու համար որոշ հնարավորությունների ստեղծման ուղղությամբ: 2015 թվականին ընդունված սահմանադրական փոփոխություններով փոխվել է ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործող օրենսդրական դաշտը: Այժմ Ազգային ժողովում քննարկման փուլում գտնվող նոր Ընտրական օրենսգրքով պետք է նախատեսվի երկրի չորս ամենամեծ ազգային փոքրամասնությունների խորհրդարանական ներկայացուցչություն: Մյուս կարեւոր փոփոխություններն

ամենայն հավանականությամբ կհանգեցնեն առաջիկայում «Խտրականության արգելքի մասին» օրենքի եւ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի ընդունմանը, ինչը նախատեսվում է փոփոխված Սահմանադրությամբ:

Շարունակվում են հրատարակվել ազգային փոքրամասնությունների լեզուներով թերթեր ու ամսագրեր, եւ հանրային ռադիոն հաղորդումներ է հեռարձակում փոքրամասնությունների լեզուներով: Աջակցություն է ցուցաբերվում ազգային փոքրամասնությունների գեղարվեստական ինքնարտահայտմանը: Այնուամենայնիվ, մշակութային նախաձեռնությունների մեծ մասը թեւս ինքնին գովելի է, սակայն ուղղված է ազգային փոքրամասնությունների ֆոլկլորային պատկերը ներկայացնելուն:

Առաջընթաց է նկատվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման գործում՝ չնայած այն հանգամանքին, որ Կառավարության կողմից սահմանված վերջնաժամկետում՝ մինչեւ 2017 թվականը, նախադպրոցական կրթական ծրագրերում ընդգրկվածության 90% ցուցանիշ ապահովելու նպատակին հասնելու համար անհրաժեշտ են էական ջանքեր: Եզդի երեխաների՝ հատկապես աղջիկների դեպքում դեռեւս բարձր են դպրոցը թողնելու ցուցանիշները: Վաղ տարիքում պայմանավորվածության վրա հիմնված ամուսնությունների պահպանվող ավանդույթն էլ ավելի է նվազեցնում 12-ամյա պարտադիր կրթությունն ավարտելու նրանց հնարավորությունները:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուներն օգտագործելու եւ մեծ թվով՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված աշխարհագրական տարածքներում տեղագրական նշաններ տեղադրելու իրավունքը ցավոք գործնականում չի կիրառվում:

Անհապաղ գործողություններ պահանջող առաջարկություններ.

- «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը եւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքներից օգտվելու վրա ազդեցություն ունեցող այլ օրենսդրություն մշակելուց առաջ եւ դրա ընթացքում իրականացնել քաղաքացիական հասարակության եւ ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ լայնածավալ խորհրդակցությունների գործընթաց, ապահովել այդ օրենսդրության՝ միջազգային չափանիշներին լիակատար համապատասխանությունը.
- մշակել նախաձեռնողական մոտեցում՝ Շրջանակային կոնվենցիային համապատասխան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու համար, ապահովել, որ Շրջանակային կոնվենցիայի համաձայն իրավունքներից օգտվելուն առնչվող քաղաքականությունները մշակվեն փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության միջոցով՝ նրանց իրական կարիքներն արտացոլելու նպատակով.
- կրկնապատկել եզրի երեխաների՝ հատկապես աղջիկների առջեւ ծառայած՝ կրթության մատչելիության հետ կապված դժվարություններն առանց հետագա ձգձգումների վերացնելուն ուղղված ջանքերը, շարունակել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության ապահովմանն ուղղված ջանքերը, մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան վերանայել օրենսդրությունը՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության, ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով.
- խորհրդակցել ազգային փոքրամասնությունների տեղական ներկայացուցիչների հետ վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուներն օգտագործելու եւ մեծ թվով՝ ազգային փոքրամասնություններին

պատկանող անձանցով բնակեցված աշխարհագրական տարածքներում տեղագրական նշանների անհրաժեշտությունը գնահատելու համար, իրականացնել իրազեկության բարձրացմանն ուղղված արշավ՝ խրախուսելով տեղական կառավարման մարմինների հետ շփվելիս փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	6
ԴԻՏԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....	6
ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ	7
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	11
ՀԵՏԱԳԱ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	12
II. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ.....	14
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾ	14
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾ	21
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾ	26
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾ.....	29
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾ.....	36
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾ	39
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾ	40
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾ.....	42
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾ.....	46
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾ.....	48
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾ	52
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾ	54
III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	55
ԱՆՀԱՊԱՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	55
ՀԵՏԱԳԱ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	56

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Դիտանցման գործընթացը

1. Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիան իրականացնելու մասին սույն չորրորդ փուլի կարծիքն ընդունվել է Շրջանակային կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետին եւ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 24-26-րդ հոդվածների համաձայն «Դիտանցման պայմանների մասին» կանոնների վերաբերյալ Նախարարների կոմիտեի (97)10 բանաձեւի 23-րդ կանոնին համապատասխան: Եզրահանգումները հիմնված են 2014 թվականի սեպտեմբերի 2-ին իշխանությունների կողմից ներկայացված չորրորդ պետական զեկույցում առկա տեղեկությունների, այլ գրավոր աղբյուրների եւ 2016 թվականի ապրիլի 5-8-ը Խորհրդատվական կոմիտեի՝ Երեւան կատարած այցի ընթացքում պետական եւ ոչ պետական անձանց հետ շփումների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

2. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է իշխանությունների՝ դիտանցման գործընթացի նկատմամբ ցուցաբերած կառուցողական եւ համագործակցային մոտեցումը՝ ներառյալ չորրորդ փուլի այցից առաջ, դրա ընթացքում եւ դրանից հետո ցուցաբերված զգալի աջակցությունը: Ավելին, Նախարարների կոմիտեի՝ երրորդ փուլի եզրակացության վերաբերյալ բանաձեւը թարգմանվել է հայերեն ու ռուսերեն եւ անմիջապես հրապարակվել է: Համապարփակ եւ արժեքավոր տեղեկություններ ներառող չորրորդ պետական զեկույցը ներկայացվել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ լայնածավալ խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Խորհրդատվական կոմիտեն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ստացել է լրացուցիչ գրավոր տեղեկություններ: Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է նաեւ, որ դիտանցման վերջին փուլի ավարտին Հայաստանում կազմակերպվել է սեմինար, որի ընթացքում բոլոր հիմնական

շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ մանրամասնորեն քննարկվել է Խորհրդատվական կոմիտեի երրորդ եզրակացությունը:

3. Խորհրդատվական կոմիտեն ակնկալում է շարունակել իշխանությունների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ Շրջանակային կոնվենցիայի իրականացման գործում ներգրավված այլ անձանց հետ իր երկխոսությունը: Ընդգրկուն եւ թափանցիկ գործընթացը խթանելու համար Խորհրդատվական կոմիտեն մեծապես խրախուսում է իշխանություններին սույն եզրակացությունը ստանալուն պես հրապարակել այն: Այն նաև առաջարկում է իշխանություններին սույն եզրակացությունը եւ Նախարարների կոմիտեի նախատեսվող բանաձեռը թարգմանել անգլերեն ու ռուսերեն եւ լայնորեն տարածել դրանք համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում: Խորհրդակցական կոմիտեն համարում է, որ, հաշվի առնելով Հայաստանում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա ազդեցություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրին առնչվող փոփոխությունների թիվը եւ լրջությունը (տե՛ս մասնավորապես 3-րդ հոդվածի հետ կապված մեկնաբանությունները), սույն եզրակացության մեջ ներկայացված դիտարկումները եւ առաջարկություններն ուսումնասիրելու նպատակով հետագա քննարկում անցկացնելն օգտակար կլիներ բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Ներկա իրավիճակի ընդհանուր պատկերը

4. Հայաստանի Հանրապետությունը շարունակում է ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն ուղղված իր ջանքերը: Դիտանցման ներկայիս փուլի ընթացքում ձեռնարկվել են էական փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում զգալի ազդեցություն կունենան ազգային փոքրամասնությունների՝ իրենց իրավունքներից օգտվելու կարողության վրա: Մասնավորապես, Ազգային ժողովին ավելի շատ լիազորություն վերապահելուց բացի՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված

հանրաքվեով Սահմանադրության փոփոխությունների ընդունմամբ¹ կփոփոխվեն մի շարք ոլորտներում ազգային փոքրամասնությունների վրա ազդեցություն ունեցող օրենսդրական կարգավորումները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ մեծ թվով սահմանադրական փոփոխություններ պետք է կյանքի կոչվեն 2018 թվականին՝ ներկայիս նախագահի պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո: Փոփոխված Սահմանադրության մեջ կրկնվել է 2005 թվականի Սահմանադրությամբ ամրագրված՝ խտրականության արգելված հիմքերի² ցանկը, եւ ներառվել է ազգային եւ էթնիկ ինքնության իրավունքի պաշտպանության մասին հատուկ դրույթը (Հոդված 54): Ավելին, «Ազգային ժողովի կազմը եւ ընտրության կարգը» վերտառությամբ 89-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «Ազգային ժողովում տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին» Ընտրական օրենսգրքի նախագծով սահմանված կարգով, որը ներկայումս քննարկվում է Ազգային ժողովում: Սահմանադրության դրույթների իրականացման նպատակով նաեւ մշակվում է «Խտրականության արգելքի մասին» օրենքը: Բացի այդ, պետք է վերանայել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը՝ հաշվի առնելով Սահմանադրության փոփոխություններով սահմանված փոփոխությունները: Այս օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել միայն այն դեպքում, երբ դրանք ընդունվեն եւ իրականացվեն:

5. Հայաստանի Հանրապետության իշխանությունները խթանում են էթնիկ խմբերի միջեւ հանդուրժողականությունը եւ հասարակության շրջանում

1. Սահմանադրական փոփոխությունների տեքստը հրապարակվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Պաշտոնական տեղեկագրում եւ ուժի մեջ է մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ին:

2. Հոդված 29, «Խտրականության արգելքը». «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ (հաստատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 20-ի նիստում)», փաստաթղթի հերթական համարը՝ CDL-REF(2015)034-e, [www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF\(2015\)034-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2015)034-e):

փոխըմբռնումը: Բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հայտնում են մեծամասնություն կազմող բնակչության եւ փոքրամասնությունների միջեւ ընդհանուր առմամբ հարգալից վերաբերմունքի առկայության մասին: Այնուամենայնիվ, մեծամասնություն կազմող բնակչության եւ իշխանությունների շրջանում հիմնական ու լայնորեն տարածված կարծիքն այն է, որ Հայաստանն ըստ էության միատարր մոնոէթնիկ եւ մեկ կրոն դավանող պետություն է, որն ընդհանուր առմամբ սահմանափակում է փոքրամասնությունների ընդգրկվածության մակարդակը եւ քիչ հնարավորություններ ապահովում այլ մշակույթների ու լեզուների եւ դրանց զարգացման համար: Ազգային փոքրամասնությունները, հատկապես՝ փոքրաթիվ համայնք ունեցողները,³ հազվադեպ են համարվում ավելին, քան Հայաստանի մշակույթի ֆոլկլորային խճանկարը լրացնող խմբեր: Ազգային փոքրամասնությունների հարցերն այս կերպ հետին պլան մղելն էլ ավելի է խորանում նրանց խնդիրների նկատմամբ հիմնական լրատվական միջոցների ուշադրության բացակայության պայմաններում: Իր իմաստի ողջ խստությամբ «մեկ ազգ, մեկ կրոն, մեկ մշակույթ» հասկացությունը, որը հնչեցվում է որոշ զանգվածային լրատվական միջոցների կողմից, ուղղված է կրոնական փոքրամասնությունների դեմ, որոնք պիտակավորվում են որպես աղանդներ ու մեղադրվում Հայաստանի պետականության հիմքերը թուլացնելու մեջ⁴:

6. Սոցիալ-տնտեսական ոլորտում դժվարությունները շարունակում են ազդել Հայաստանի բնակչության մեծ մասի վրա: Կարիքավորությունն ավելի սուր արտահայտված է աղքատ շրջաններում, որոնցից մի քանիսում՝ մեկուսացված լեռնային տարածքներում, բնակվում են մեծ թվով եզդի ազգային փոքրամասնության պատկանող անձինք: Հետեւաբար արտագաղթի հետեւանքով այս համայնքում էականորեն նվազել է թե՛ թվաքանակը, թե՛ հայ հասարակության մեջ դրա թվային հարաբերակցությունը: Մյուս կողմից, գովելի է այն փաստը, որ

3. 2011 թվականին անցկացված մարդահամարի արդյունքների համաձայն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թվի վերաբերյալ տվյալների համար տե՛ս 25-րդ պարբերությունը:

4. Տե՛ս ԵՀՀ Հայաստան (2014 թվական), «Հայաստանի կրոնական եւ էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերի երեխաների իրավունքները», Երեւան, էջ 16, http://www.epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/2014_Field_Study_Rights_of_Children_en.pdf կայքում:

չնայած տնտեսական դժվարություններին՝ Հայաստանն ընդունել է ավելի քան 20 000 մարդ՝ հիմնականում հայկական եւ ասորական ծագման, որոնք հակամարտության պատճառով լքել են Սիրիան:

7. Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հակամարտությունը, որը սաստկացել էր այցի ընթացքում, հարեան պետությունների հետ փակ սահմանները եւ դրանց հետեանքով ի հայտ եկած տնտեսական դժվարությունները զգալի ազդեցություն են ունենում մեծամասնության, ինչպես նաեւ փոքրամասնությունների սոցիալական ու տնտեսական վիճակի վրա: Դրանք նաեւ էականորեն սահմանափակում են ազգային փոքրամասնությունների համար քաղաքականությունների եւ ծրագրերի իրականացման նպատակով հասանելի ռեսուրսները: Արտագաղթը հանգեցրել է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թվի նվազեցմանը. ազգային փոքրամասնությունները, արդեն իսկ լինելով փոքրաթիվ, նաեւ կորցնում են իրենց առավել գործարար եւ ակտիվ անդամներին:

8. Եթե դիտարկենք դրական տեսանկյունից, ապա իշխանությունները շարունակում են օժանդակել ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերին եւ տրամադրում են դրամաշնորհներ նրանց լեզուներով հրապարակվող թերթերին ու պարբերականներին: Հայաստանի Հանրապետության Հանրային ռադիոն շարունակում է հեռարձակել 11 ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ: Ռուսերենով եւ ուկրաիներենով արտասահմանյան հեռուստահեռարձակումները լայնորեն հասանելի են կաբելային կապով: Դպրոցում ուսուցանվում են եզդիերեն, քրդերեն, ռուսերեն, ասորերեն ու հունարեն, եւ տարբեր ձեւերով աջակցություն է ցուցաբերվում այլ ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանը: Յավդք, իշխանությունները բավականին պասիվ մոտեցում են ցուցաբերում ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերի նկատմամբ, քանի որ նրանք փոքրաթիվ լինելու պատճառով չունեն մշակութային միջոցառումներ նախաձեռնելու համար անհրաժեշտ կազմակերպական եւ մարդկային

ոեսուրսների ներուժ եւ չունեն իրենց կարիքների մասին բարձրաձայնելու հնարավորություն: Հաճախ այդպիսի ծրագրերը սահմանափակվում են փոքրամասնությունների մշակույթների ոչ խոր ասպեկտներով:

9. 2011 թվականին անցկացված մարդահամարի արդյունքների հաշվարկման գործընթացում առաջացած խնդիրները՝ ներառյալ հավաքագրված տվյալների ոչ ճշգրիտ լինելը, թափանցիկության բացակայությունը եւ 2013 թվականի դեկտեմբերին դրանց հրապարակումը ձգձգելը կասկածներ է հարուցում հրապարակված վերջնական արդյունքների հավաստիության առնչությամբ:

Անմիջական գործողություններ պահանջող առաջարկությունների կատարման համար ձեռնարկված միջոցառումների գնահատումը

10. Անմիջական գործողություններ պահանջող առաջարկությունների կատարման համար ձեռնարկված միջոցառումներն ընդլայնել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց տրված՝ 2011 թվականին անցկացված մարդահամարի ընթացքում ինքնանույնականացման իրավունքից օգտվելու հնարավորությունները⁵: Ի տարբերություն 2010 թվականին անցկացված փորձնական մարդահամարի՝ 2011 թվականին անցկացված մարդահամարի ընթացքում էթնիկ պատկանելության եւ օգտագործվող լեզուների վերաբերյալ հարցերը սահմանափակումներ չունեին եւ կամընտիր էին: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ պատասխանողները չունեին մեկից ավելի էթնիկ պատկանելություն նշելու հնարավորություն, ինչը հակասում էր սահմանված միջազգային չափանիշներին: Մարդահամարի՝ ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական բաշխվածության առանձնացված արդյունքները հրապարակվել են 2013 թվականին եւ հասանելի են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կայքում⁶:

⁵. Մարդահամարը Հայաստանի Հանրապետությունում անցկացվել է 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը:

⁶. Տե՛ս մանրամասն տվյալները www.armstat.am/en/?nid=517 կայքում:

11. Վերջին հինգ տարիների ընթացքում շարունակվում են տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների վերաբերյալ քննարկումները՝ առանց հստակորեն նշված վերջնաժամկետի: Իշխանություններին փորձագիտական օգնություն է տրամադրվում «Աջակցություն՝ Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Դանիայի կառավարության կողմից և իրականացվում է Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից⁷: Իրականացման մոնիթորինգ է կատարում Եվրոպայի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը⁸:

Հետագա առաջարկությունները կատարելու համար ձեռնարկված միջոցառումների գնահատումը

12. 2015 թվականին անցկացված հանրաքվեով սահմանադրական փոփոխությունների ընդունումը կրկին հաստատում է հայ հասարակության և իշխանությունների՝ հավասարության ու խտրականության բացառման սկզբունքները պահպանելու ձգտումը: Առաջընթաց է նկատվում «Խտրականության արգելքի» մասին օրենքի մշակման գործընթացում: Լայնածավալ հանրային քննարկումների և իրազեկության բարձրացման արշավի արդյունքում այս օրենքի ընդունումը ծրագրվում է 2017 թվականին:

13. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ակտիվորեն հայտնում են այն կարծիքը, որ Հայաստանում տիրում է անկեղծության ու հանդուրժողականության մթնոլորտ, և որ իրենք չեն բախվում ռասայի, հակասեմականության և այլատյացության հիմքով թշնամանքի: Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ ռասայական, ազգային կամ կրոնական

⁷. Տե՛ս «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը», www.coe.int/en/web/yerevan/support-to-consolidating-local-democracy-in-armenia:

⁸. Տե՛ս Ստրասբուրգում 2014 թվականի մարտի 25-27-ը ԵԽՏՏԻԿ-ի 26-րդ նիստի ընթացքում ընդունված «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» 351 (2014) առաջարկությունը <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&id=2170873&Site=COE&direct=true> կայքում:

ատելություն հարուցելը հանցագործություն է: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Քրեական օրենսգրքում չկա ատելության քարոզչության որեւէ սահմանում եւ ռասայական շարժառիթը՝ որպէս հանցագործության ծանրացնող հանգամանք, մեկնաբանվում է բավականին նեղ իմաստով՝ տարածվելով միայն սպանության, բռնության եւ գույքը դիտավորությամբ վնասելու վրա:

14. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը փոփոխվել է 2010 թվականի հունիսի 10-ին՝ թվային եթերային հեռարձակման անցնելու գործընթացը կարգավորելու նպատակով: Չնայած գործող՝ հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենսդրական դրույթների փոփոխությունը կոնկրետ միտված չէ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների նվազագույն եթերաժամանակ ապահովելուն, սակայն թվայնացման շնորհիվ ստեղծվում են փոքրամասնությունների լեզուներով հեռարձակում իրականացնելու նոր հնարավորություններ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հեռարձակման ներկայիս մակարդակը գնահատում են բավարար:

II. Եզրահանգումներ՝ ըստ հոդվածների

Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդված

Շրջանակային կոնվենցիայի գործողությունն անձանց նկատմամբ

15. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ դիտանցման նախորդ փուլից ի վեր Հայաստանի իշխանությունների՝ Շրջանակային կոնվենցիայի գործողության ոլորտի հետ կապված դիրքորոշման առնչությամբ որեւէ փոփոխություն չի նկատվում: Իշխանությունները Հայաստանում գտնվող՝ ազգային փոքրամասնություններ կազմող բոլոր խմբերի նկատմամբ շարունակում են ցուցաբերել բաց եւ ներառական մոտեցում: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն հիշեցնում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ սահմանված չէ «ազգային փոքրամասնություն» եզրույթը, սակայն գործնականում, դիտանցման առաջին փուլի ընթացքում ներկայացված սկզբնական պետական զեկույցի համաձայն, ենթադրվում է, որ «ազգային փոքրամասնություն» նշանակում է «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք բնակչության [հիմնական մասից] տարբերվում են իրենց էթնիկ ծագմամբ»⁹:

16. Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհուրդն այն հիմնական հարթակն է, որտեղ առավել մեծ համայնք ունեցող տասնմեկ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ մասնավորապես ասորիները, բելառուսները, վրացիները, գերմանացիները, հույները, հրեաները, քրդերը,

⁹. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված առաջին զեկույցը՝ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն», պարբերություն 19, փաստաթղթի հերթական համարը՝ ACFC/SR (2001)4, <http://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168008aed0> կայքում:

լեհերը, ռուսները, ուկրաինացիներն ու եզդիները, կարող են հայտնել իրենց մտահոգությունը եւ իշխանությունների հետ քննարկել իրենց հուզող հարցերը: Այդպիսով, նրանց խնդիրները դառնում են ավելի նկատելի եւ ճանաչելի՝ ի տարբերություն մյուս ազգային խմբերի, որոնք Համակարգող խորհրդում ներկայացված չեն, ինչպես օրինակ՝ արխազները, արազիները, բուլղարացիները, լատվիացիները, լիտվացիները, լոմերը (բոշաները), մոլդովացիները, մորդովացիները, ինգուշերները, օսերը, պարսիկները, ռումինացիները, թաթարները, ուդիները եւ այլք:

17. Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ԵՊՇ թիվ 148)¹⁰ վավերացման փաստաթղթում առկա իր հայտարարության մեջ Հայաստանը հայտնել է, որ Խարտիայի դրույթները կիրառվում են ազգային փոքրամասնությունների հինգ լեզուների՝ ասորերենի, հունարենի, քրդերենի, ռուսերենի եւ եզդիերենի նկատմամբ: Ավելին, Ընտրական օրենսգրքի նախագծի համաձայն¹¹ համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում կարող են ընդգրկվել «ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների» ներկայացուցիչներ: Սույն դրույթն ընդունելու եւ իրականացնելու դեպքում կապահովվի ասորի, քուրդ, ռուս եւ եզդի ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունն Ազգային ժողովում (տե՛ս նաեւ 15-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված՝ ազգային փոքրամասնությունների ներկայացվածության մասին մեկնաբանությունները):

¹⁰. Տե՛ս Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ԵՊՇ թիվ 148)՝ 2002 թվականի հունվարի 25-ին ավանդապահին ի պահ հանձնված վավերացման փաստաթղթում առկա հայտարարությունը www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/148/declarations?p_auth=vjLWxP1s կայքում:

¹¹. Տե՛ս «2016 թվականի ապրիլի 18-ի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագծի» 83-րդ հոդվածի 5-րդ մասը եւ 95-րդ հոդվածի 9-րդ մասը, փաստաթղթի հերթական համարը՝ CDL-REF(2016)030, [www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF\(2016\)030-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2016)030-e) կայքում:

18. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ տարբեր ազգային փոքրամասնությունների նկատմամբ օրենսդրական ակտերում կիրառվող տարբեր մոտեցումներով հստակ արտահայտվում է 2015 թվականին փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի գործողության ոլորտի մանրամասն ուսումնասիրության անհրաժեշտությունը (մանրամասների համար տե՛ս 21-րդ և 22-րդ պարբերությունները): Օրենքը պետք է ընդունել միայն բոլոր, այդ թվում՝ Համակարգող խորհրդում ներկայումս չներկայացված շահագրգիռ կողմերի հետ լայնածավալ խորհրդակցություններից հետո: Մասնավորապես, Խորհրդատվական կոմիտեն մի կողմից ցանկանում է հիշեցնել, որ կողմերն ազատ են իրենց հայեցողությամբ սահմանելու Շրջանակային կոնվենցիայի՝ անձանց նկատմամբ գործողության ոլորտը՝ հաշվի առնելով իրենց երկրի առանձնահատուկ հանգամանքները, մյուս կողմից նշում է, որ դա պետք է իրականացվի Միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և 3-րդ հոդվածով սահմանված հիմնարար սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես հիշեցվում է այն, որ Շրջանակային կոնվենցիայի իրականացումը չպետք է լինի կամայական կամ անհիմն տարբերակումների աղբյուր:

19. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ իշխանությունները չեզոք դիրք են պահպանում քուրդ և եզդի ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչների միջև առկա տարաձայնության այն հարցի շուրջ, թե արդյոք նրանք իրարից տարբեր ազգային ինքնություն ունեն, թե միեւնույն խմբի մասն են կազմում, սակայն տարբերվում են կրոնական ինքնությամբ:

Առաջարկություն

20. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին շարունակել Շրջանակային կոնվենցիայի գործողության ոլորտի առնչությամբ ցուցաբերել ներառական մոտեցում և խստորեն պահպանել Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված ազատ ինքնանույնականացման սկզբունքը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը

21. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ վերջերս ընդունված սահմանադրական փոփոխությունների 54-րդ հոդվածով նախատեսվում է ընդունել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք, որը կներառի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար «ազգային եւ էթնիկ ինքնությունը պահպանելու» եւ «ավանդույթների, կրոնի, լեզվի եւ մշակույթի պահպանման ու զարգացման» իրավունքից օգտվելը երաշխավորող մանրամասն դրույթներ: Իշխանությունները Խորհրդակցական կոմիտեին տեղեկացրել են, որ օրենքի նախագիծը կմշակվի 2016 թվականի ընթացքում, եւ դրա վերաբերյալ լայնածավալ քննարկումները կսկսվեն 2017 թվականին:

22. Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարծես թե իրազեկված չեն կարգավորման առարկայի եւ անձանց նկատմամբ գործողության ոլորտի, ինչպես նաեւ այն կարգի մասին, որը պետք է ընդունվի օրենքը մշակելու նպատակով: Ավելին, այն նշում է, որ այն համատեքստը, որում մշակվելու է օրենքը Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունից ու «Խտրականության արգելքի մասին» օրենքի ծրագրված ընդունումից հետո, հնարավորություն է տալիս մշակելու այլ ներպետական իրավական ակտերին համապատասխան եւ ի լրումն դրանց ու Շրջանակային կոնվենցիայի համաձայն համապարփակ, ժամանակին համահունչ օրենսդրական ակտ: Ակտիվ քննարկումները եւ ազգային փոքրամասնությունների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներդրումն ազգային փոքրամասնությունների կարիքներին ու հավակնություններին լավագույնս հարմարեցված օրենսդրական ակտ մշակելու կարելուր նախապայմաններն են:

Առաջարկություններ

23. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին ներգրավվել քաղաքացիական հասարակության եւ ազգային փոքրամասնության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ լայնածավալ

խորհրդակցությունների գործընթացում «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը մշակելուց առաջ եւ հետո:

24. Խորհրդատվական կոմիտեն նաեւ կոչ է անում իշխանություններին ապահովել միջազգային չափանիշներին ու Հայաստանի ստանձնած պարտավորություններին օրենքի լիակատար համապատասխանությունն ու այդ ոլորտում առկա փորձի կիրառումը:

Մարդահամարը եւ էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքագրումը

25. 2011 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման արդյունքները հրապարակվել են բավականին ուշ՝ 2013 թվականի դեկտեմբերին: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն, որ էթնիկ պատկանելության ու օգտագործվող լեզուների վերաբերյալ հարցերը սահմանափակումներ չունեին եւ կամընտիր էին: Ցավոք, հակառակ Եվրոպայի վիճակագիրների համաժողովի 2010 թվականի մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման մասին առաջարկության, պատասխանողներին թույլ չի տրվել նշել մեկից ավելի էթնիկ պատկանելություն¹², չնայած պետք է նշել, որ օգտագործվող լեզուների («մայրենի լեզու» կամ «այլ լեզու») վերաբերյալ հարցերով պատասխանողներին տրվել է մեկից ավելի լեզու նշելու կամ հարցին չպատասխանելու հնարավորություն: Մարդահամարի հրապարակված արդյունքների համաձայն՝ 3 018 854 պատասխանողներից հայկականից բացի այլ էթնիկ պատկանելություն է նշել 35 308 եզդի, 11 911 ռուս, 2 769 ասորի, 2 162 քուրդ, 1 176 ուկրաինացի, 900 հույն, 617 վրացի եւ 476 պարսիկ:

¹². «Եվրոպայի վիճակագիրների համաժողովի 2010 թվականի մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման առաջարկություններ», պատրաստվել է Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակի (EUROSTAT) եւ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հետ համագործակցության արդյունքում, 426-րդ պարբերություն. «Պատասխանողները պետք է ունենան մեկից ավելի էթնիկ պատկանելություն կամ էթնիկ պատկանելության համադրություն նշելու ազատություն, եթե նրանք այդպես են ցանկանում»:

Այլ ազգերի վերաբերյալ թվերով արտահայտված տվյալները չեն հրապարակվել՝ հաշվի առնելով նրանց փոքրաթիվ լինելը եւ տվյալների պաշտպանության կանոնները (այլ էթնիկ պատկանելություն նշած անձանց ընդհանուր թիվը կազմում է 1 634, եւս 100 մարդ հրաժարվել է պատասխանելուց): Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ մարդահամարի ընթացքում հավաքագրված՝ ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական բաշխվածության տարբերակված տվյալները հանրամատչելի են եւ, ստացված տեղեկությունների համաձայն, շատ են օգտագործվում պետական մարմինների, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կողմից իրենց քաղաքականությունները բարելավելու համար եւ պարզելու՝ արդյոք ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքները պատշաճորեն բավարարվում են:

26. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված ազգային փոքրամասնությունների պատկանող՝ մասնավորապես եզդի եւ քուրդ, մարդահամարի հաշվարարների վերապատրաստմանը՝ տարբեր փոքրամասնությունների պատկանող պատասխանողներին իրենց էթնիկ պատկանելությունը հայտնելու հարցում խրախուսելու նպատակով: Այն նաեւ բարձր է գնահատում իրազեկության բարձրացմանն ուղղված լայնածավալ արշավը, որն անցկացվել է մինչեւ մարդահամարը:

27. Մարդահամարի ընթացքում հավաքագրված տվյալները ցույց են տալիս անկում՝ թե՛ մեծամասնություն կազմող բնակչության թվի համեմատությամբ, թե՛ հայկականից բացի այլ էթնիկ պատկանելություն նշած անձանց բացարձակ թվի առումով (2001 թվականի 2.1%-ի¹³ համեմատ 2011 թվականին այն նվազել է մինչեւ 1.84%)¹⁴: Անկումն առավել արտահայտված է եզդի ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց թվի դեպքում (2001 թվականի 40 620-ի համեմատ այն 2011

¹³. 2001 թվականին անցկացված մարդահամարի ընթացքում 3 213 011 բնակչությունից 67 657-ը նշել է ոչ հայկական էթնիկ ծագում:

¹⁴. 2011 թվականին անցկացված մարդահամարի ընթացքում 3 018 054 բնակչությունից 56 953-ը նշել է ոչ հայկական էթնիկ ծագում:

թվականին նվազել է մինչև 35 308): Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ իշխանությունները, ինչպես նաև ներկայացուցիչներն այս անկումը վերագրում են ծանր տնտեսական դրությանը, որն իր ազդեցությունն է թողնում մեծամասնություն կազմող բնակչության ու բոլոր ազգային փոքրամասնությունների վրա, ինչը հանգեցրել է Հայաստանից արտագաղթի ծավալների աճին: Եզդի ազգային փոքրամասնության շրջանում նկատվող արտագաղթի բարձր ցուցանիշը վերագրվում է ծանր կենսապայմաններին, մեկուսացված այն լեռնային տարածքների տնտեսական թույլ զարգացվածությանը, որտեղ նրանք բնակվում են, եւ բազմաթիվ այլ պետություններում կայացած ազգային համայնքների առկայությանը:

28. Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, նշում է, որ ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ մտահոգություն են հայտնել հավաքագրված տվյալների վերաբերյալ, իսկ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությունը հաստատում է այն դժվարությունները, որոնք ի հայտ են եկել հաշվառման գործընթացում¹⁵: Մասնավորապես, ազգային փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչներ բողոքել են, որ հաշվարարն իրենց երբեք չի այցելել, եւ կասկածի տակ են դրել մարդահամարի հրապարակված վերջնական արդյունքների հավաստիությունը: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ բնակելի միավորների 10%-ում (85 000 բնակելի շինություններ) անցկացված մարդահամարի վերահսկիչ շրջագայության ընթացքում հայտնաբերվել է հաշվառումից դուրս մնացած 2 960 մարդ¹⁶: Իշխանությունները պետք է հաշվի առնեն պաշտոնական մարդահամարի տվյալների նկատմամբ վստահության համընդհանուր բացակայությունը հատկապես ազգային փոքրամասնությունների վրա ազդող քաղաքականություններ մշակելիս:

29. Տասը տարին մեկ անգամ կազմակերպվող մարդահամարների ընթացքում բնակչության էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների միակ աղբյուրը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններն են,

¹⁵. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքները», էջ 61-62, www.armstat.am/file/doc/99486538.pdf:

¹⁶. Նույն տեղում՝ էջ 62:

որոնցում կամավոր հիմունքներով տեղեկություններ են հավաքագրվում ծնողների էթնիկ պատկանելության վերաբերյալ: Բացի այդ, հարկ է նշել, որ կյանքի միջին տետղության վերաբերյալ տվյալները, որոնք կարող էին էթնիկ պատկանելության հետ ներկայացվել խաչաձեւ աղյուսակի տեսքով սոցիալական պայմանները ցույց տալու նպատակով, չեն հավաքագրվում՝ զրկելով իշխանություններին մի գործիքից, որը կարող էր ծառայել սոցիալ-տնտեսական քաղաքականություններն առավել խոցելի խմբերին հարմարեցնելու համար:

Առաջարկություններ

30. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին բարձրացնել թափանցիկության մակարդակն ու ձեռնարկել անհրաժեշտ այլ քայլեր՝ էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքագրման պատշաճ մեթոդներ մշակելու համար՝ լիովին հարգելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ազատ ինքնանույնականացման սկզբունքը:

31. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ապահովել, որ Շրջանակային կոնվենցիայով սահմանված իրավունքներից օգտվելու վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունները հիմնված չլինեն միայն մարդահամարի արդյունքների վրա, այլ մշակվեն փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության արդյունքում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքներն արտացոլելու համար:

Շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդված

Խտրականության ոլորտում ինստիտուցիոնալ եւ իրավական զարգացումները

32. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ու քաղաքացիական

հասարակության կազմակերպությունները համամիտ են, որ տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք չեն ենթարկվում խտրականության, եւ նրանց նկատմամբ վերաբերմունքն ընդհանուր առմամբ արդարացի է: Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցները մի շարք առիթներով վերահաստատել են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք բախվում են այն նույն դժվարություններին ու մարտահրավերներին, որոնց բախվում է բնակչության մեծամասնությունը, եւ որ հիմնականում դժվար սոցիալ-տնտեսական վիճակն է հանգեցրել երկրից լայնամասշտաբ արտագաղթի:

33. Խորհրդատվական կոմիտեն այս համատեքստում նշում է, որ հիմնվելով խտրականության դեմ ուղղված օրենք ընդունելու՝ նախկինում չհաջողված ջանքերի արդյունքում ձեռք բերված փորձի վրա՝ իշխանությունները քաղաքացիական հասարակության հիմնական գործընկերների հետ համագործակցության միջոցով մշակում են խտրականության արգելքի մասին օրենք: Քաղաքացիական հասարակության զրուցակիցները Խորհրդատվական կոմիտեին իրենց գոհունակությունն են հայտնել գործընթացի, ինչպես նաեւ նախագծի տեքստի վերաբերյալ, որում, ըստ նրանց, արտացոլվում են եվրոպական ստանդարտները՝ մասնավորապես խտրականության բացառման վերաբերյալ ԵՄ հրահանգներն ու Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ընդհանուր քաղաքականության վերաբերյալ համապատասխան առաջարկությունները:

34. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ըստ իր զրուցակիցների՝ նախագծի տեքստում տրվում են ուղղակի եւ անուղղակի խտրականության սահմանումները եւ սահմանվում են պետական եւ մասնավոր սուբյեկտների կողմից խտրականության դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Այն նաեւ նշում է, որ նախատեսվում է «խտրականության արգելքի մասին» օրենքով Մարդու իրավունքների պաշտպանին նոր գործառույթներ եւ լիազորություններ վերապահել: Այդ նպատակից ելնելով՝ իշխանությունները

նախատեսում են առաջին իսկ հնարավորության դեպքում վերանայել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքն ու փոփոխություններ կատարել այդ օրենքում:

35. Խորհրդատվական կոմիտեն այս համատեքստում նշում է, որ իշխանությունները շարունակում են աջակցել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործունեությանը, որը կարծես թե շարունակում է վայելել հասարակության վստահությունը: Պաշտպանի կողմից Ազգային ժողով ներկայացվող տարեկան զեկույցները կարելի է մեխանիզմ են պետության կառույցների բարձրագույն մակարդակում մարդու իրավունքների մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար: Օրինակ 2012 թվականին անգլերենով¹⁷ հասանելի վերջին տարեկան զեկույցը, որը պարունակում է բողոքների մանրամասն ցանկը, ցույց է տալիս, որ պաշտպանին ներկայացվել է 2 420 բողոք, ինչն անցյալ տարվա համեմատ 39%-ով ավելի է: Խոցելի խմբերի¹⁸ պատկանող անձանց կողմից ներկայացված 660 բողոքներից միայն հինգն է դասակարգվել որպես էթնիկ ծագման հիմքով ներկայացված բողոք: Այս դեպքերից յուրաքանչյուրի առնչությամբ պաշտպանը եզրակացրել է, որ իրավունքների ենթադրյալ խախտումները հիմնականում ընդհանուր բնույթի են եւ որեւէ կապ չունեն բողոքը ներկայացնողի ազգային կամ էթնիկ ծագման հետ (օրինակ՝ բնակարանային խնդիրներ եւ դժվարություններ, որոնց նրանք բախվել են սոցիալական ծառայությունների ոլորտում):

36. Ինչ վերաբերում է աշխատանքային ոլորտում հավասարությունը խթանելուն, իշխանություններն այդ նպատակով ստեղծված զբաղվածության 51 կենտրոնների միջոցով զբաղվածության 14 ծրագիր են իրականացնում: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այս ծրագրերի առանցքային խնդիրը ծայրահեղ աղքատության դեմ պայքարելն է: Թեեւ այս ծրագրերն

¹⁷. Տե՛ս «2012 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը», էջ 117:

¹⁸. Նույն տեղում՝ էջ 118:

անմիջականորեն մշակված չեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար, սակայն վերջիններս հավասարապես օգտվում են դրանցից:

37. Եվրոպական հարեանության քաղաքականության¹⁹ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում 2012 թվականի հոկտեմբերի 29-ին ընդունվեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, որին 2014 թվականի մարտին հետեւեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը²⁰: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մասնակցել են ռազմավարության մշակման գործընթացին, եւ նրանց ջանքերը հաշվի են առնվել: Ազգային ռազմավարությամբ²¹ սահմանվել է մարդու իրավունքների պաշտպանության շրջանակ նպատակային ուղղվածությամբ մի շարք ծրագրեր ընդունելու միջոցով՝ ներառյալ Իրավական եւ դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը, Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարությունը, Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրն ու Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը: Գործողությունների ծրագրում թվարկվում է ձեռնարկվելիք 119 գործողություն ու ակնկալվող արդյունքներ, նշվում է այդ գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար պատասխանատու պետական մարմինը, սահմանվում են ժամկետները, ու նշվում են

¹⁹. Տե՛ս ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագիրը www.eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf կայքում:

²⁰. Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը <http://www.coe.int/t/commissioner/source/NAP/Armenia-National-Action-Plan-on-Human-Rights.pdf> կայքում:

²¹. Տե՛ս ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի 4.1.1 պարբերությունը՝ «Ժողովրդավարություն եւ օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ եւ հիմնարար ազատություններ. Ժողովրդավարությունը եւ օրենքի գերակայությունը երաշխավորող հաստատությունների կայունության ու արդյունավետության ամրապնդում» www.eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf կայքում:

Ֆինանսավորման աղբյուրները: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ծրագրերից ոչ մեկը հատուկ չի անդրադարձել ազգային փոքրամասնություններին, սակայն դրանցից յուրաքանչյուրը պատշաճ իրականացվելու դեպքում շահավետ կլինի բոլորի համար:

38. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները քննադատել են գործողությունների ծրագրում թվարկված միջոցառումներն իրականացնելու մանրամասն ճանապարհային քարտեզի բացակայությունը, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը, քաղաքացիական ծառայողների համար նախատեսված վերապատրաստման ծրագրերի վրա շեշտ դնելը, միջանկյալ գնահատում եւ մոնիթորինգ իրականացնելու մեխանիզմների բացակայությունը, ընդհանուր հասարակության շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների բացակայությունն ու ծրագրի իրականացման դանդաղ ընթացքը: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն ավստասանքով նշում է, որ ծրագրով թվարկված միջոցառումներից շատերին դեռեւս ընթացք չի տրվել, եւ որ գործողությունների ծրագրի մեկնարկից երկու տարի անց որեւէ գնահատում չի իրականացվել:

Առաջարկություններ

39. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում շարունակել «Խտրականության արգելքի մասին» օրենքի մշակման գործընթացում քաղաքացիական հասարակությանը ներգրավելը եւ անհապաղ ընդունել օրենքը: Իշխանությունները պետք է օրենքի նպատակների, գործողության ոլորտի եւ բողոքի մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված համապարփակ քարոզարշավ իրականացնեն:

40. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին տրամադրել համապատասխան

ոեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական, որպեսզի այն կարողանա արդյունավետորեն իրականացնել «Խտրականության արգելքի մասին» օրենքով սահմանված նոր պարտավորություններն ու խստացնի խտրականության ենթադրյալ դեպքերի մոնիթորինգը:

41. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում կրկնապատկել ջանքերը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը քաղաքացիական հասարակության եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ սերտ խորհրդակցության միջոցով իրականացնելու ուղղությամբ եւ ապահովել, որ նպատակները հաջողությամբ իրականացվեն:

Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդված

Պայմանները, որոնք թույլ են տալիս փոքրամասնություններին պահպանել եւ զարգացնել իրենց մշակույթը

42. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեությանն աջակցելու հարցերը կարգավորող օրենսդրական շրջանակն ու Կառավարության քաղաքականությունները վերջին հինգ տարիներին մնացել են անփոփոխ: Մշակութային քաղաքականության, մշակութային դրսեւորումների բազմազանությունը խթանող պետական քաղաքականությունների սկզբունքներն ու նպատակները եւ ազգային փոքրամասնությունների մշակույթներին ցուցաբերվող աջակցությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը շարունակում է մնալ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքը (2002 թվական): Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ մշակութային քաղաքականության հիմքում ընկած երեք հիմնարար սկզբունքներն են՝ ազգային ինքնության պահպանությունն ու էթնիկ մշակույթի զարգացումը, Հայաստանի մշակութային

կյանքին ազգային փոքրամասնությունների լիարժեք ինտեգրումը եւ էթնիկ հիմքով խտրականության կանխումը: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն հիշեցնում է «Շրջանակային կոնվենցիայի գործողության ոլորտի վերաբերյալ թիվ 4 թեմատիկ մեկնաբանության» մեջ իր արտահայտած տեսակետը, ըստ որի՝ ինտեգրումը փոխզիջման վրա հիմնված գործընթաց է եւ ազդում է ամբողջ հասարակության վրա: Մասնավորապես, ըստ Կոմիտեի՝ չպետք է ակնկալել, որ ինտեգրմանն ուղղված ջանքեր պետք է գործադրեն միայն փոքրամասնությունների համայնքներին պատկանող անձինք. ջանքեր պետք է գործադրվեն նաեւ մեծամասնություն կազմող բնակչության կողմից²²:

43. Միջմշակութային երկխոսության եւ ազգային փոքրամասնությունների մշակութային դրսեւորումների ոլորտում ազգային բոլոր հաստատությունների գործունեությունը Մշակույթի նախարարության իրավասության շրջանակներում է, որը պատասխանատու է դրանց իրականացման համար անհրաժեշտ պատշաճ ֆինանսական եւ այլ նյութական օժանդակություն տրամադրելու համար: Մշակութային ոլորտի շրջանակներում ազգային փոքրամասնություններին աջակցելուն ուղղված հիմնական ջանքերի նպատակը տարբեր ազգային փոքրամասնությունների խմբերի պատմության եւ հայ հասարակության մեջ նրանց ունեցած ավանդի վերաբերյալ գրքեր հրատարակելու, վավերագրական ֆիլմեր պատրաստելու (ինչպես «Ասորիները՝ Հայաստանում»), արվեստի փառատոններ կազմակերպելու եւ պատմական ու մշակութային հուշարձանները, այդ թվում՝ ներառյալ գերեզմանոցներն ու պաշտամունքի վայրերը վերականգնելու միջոցով նրանց մշակույթները պահպանելն ու խթանելն է: Նման ուշագրավ մի նախագիծ ներառում էր Եղեգիսում հրեական բնակավայրի եւ միջնադարյան գերեզմանոցի հարակից տարածքի մասնակի վերակառուցում:

²² Տե՛ս 2016 թվականի մայիսի 27-ին ընդունված «Շրջանակային կոնվենցիան՝ փոքրամասնությունների իրավունքների միջոցով բազմազանությունը կարգավորող առանցքային գործիք» թիվ 4 թեմատիկ մեկնաբանությունը «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի գործողության ոլորտի վերաբերյալ, 44-րդ պարբերություն, էջ 18, հասանելի է <http://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a4811> կայքում:

44. 2011 թվականին մեկնարկեցին մի շարք նախաձեռնություններ՝ ներառյալ «Հայաստանը մեր տունն է» խորագրով փառատոնը, որի ընթացքում Հայաստանում բնակվող ազգային բոլոր փոքրամասնություններին կոչ էր արվել տաղավար բացել եւ ներկայացնել իրենց մշակույթը, ֆոլկլորը, խոհանոցն ու երաժշտությունը: Ազգային գրադարանում եւ ուսումնական այլ հաստատություններում պահվում է հունարենով, քրդերենով, ռուսերենով եւ այլ փոքրամասնությունների լեզուներով գրքերի ընդարձակ հավաքածու: Ազգային փոքրամասնություններին պատկանող հեղինակների աշխատությունները հրատարակվում են «Գրական Արմավիր» անվամբ հայտնի ազգային հեղինակների ակումբի հավաքածուներում: Թեեւ այս նախաձեռնություններն ինքնին ողջունելի են, սակայն ցավոք դրանց շնորհիվ ներկայացվում է միայն ազգային փոքրամասնությունների ֆոլկլորային պատկերը:

45. Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է, որ պետական զեկույցի համաձայն՝ 2012 թվականից սկսած՝ ազգային փոքրամասնություններին աջակցելու համար իշխանությունների տարեկան հատկացումը կրկնապատկվել է՝ 10 միլիոն դրամից²³ հասնելով 20 միլիոն դրամի: Համակարգող խորհուրդն այս գումարի կեսը հատկացրել է ազգային փոքրամասնությունների մշակույթների զարգացմանը եւ ազգային փոքրամասնությունների համայնքների լեզուների ու ինքնության պահպանմանն ուղղված կարեւորագույն նախաձեռնությունների եւ ծրագրերի ֆինանսավորմանը (տե՛ս նաեւ 15-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված մեկնաբանությունները): Ըստ մի շարք զրուցակիցների՝ լրացուցիչ ֆինանսական աջակցությունը տրամադրվում է համապատասխան մայր պետությունների դեսպանատների կողմից: Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, նշում է, որ ընդհանուր առմամբ իշխանությունները բավականին պասիվ մոտեցում են ցուցաբերում ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերի նկատմամբ: Հաշվի առնելով, որ ազգային փոքրամասնությունների մի շարք խմբեր համեմատաբար փոքր են, չունեն

²³. 10 միլիոն դրամը համարժեք է մոտավորապես 18 440 եվրոյի:

կազմակերպչական եւ մարդկային համապատասխան ներուժ՝ մշակութային միջոցառումներ նախաձեռնելու համար, այդ խմբերն ի վիճակի չեն արտահայտելու իրենց կարիքները մշակութային ոլորտում եւ պահանջում են ավելի նախաձեռնողական աջակցություն (ազգային փոքրամասնությունների թվաքանակի վերաբերյալ տվյալների համար տե՛ս 25-րդ պարբերությունը):

Առաջարկություններ

46. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում շարունակել եւ ամրապնդել ջանքերը՝ ուղղված համապատասխան ֆինանսական աջակցություն տրամադրելուն՝ մասնավորապես ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ փոքրաթիվ համայնք ունեցող ու մայր պետության կողմից աջակցություն չստացող փոքրամասնություններին իրենց մշակութային նախաձեռնությունների եւ թանգարանների համար այն հասանելի դարձնելու միջոցով:

47. Իշխանությունները պետք է ավելի նախաձեռնողական մոտեցում ընդունեն ազգային փոքրամասնությունների մշակութային դրսեւորումների առնչությամբ եւ խթանեն նաեւ ավելի լայնամասշտաբ դրսեւորումները, որոնք չեն սահմանափակվում միայն ֆոլկլորով:

Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդված

Միջէթնիկական եւ միջմշակութային հարաբերությունները

48. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ Հայաստանում ընդհանուր առմամբ տիրում է հանդուրժողականության եւ հարգանքի մթնոլորտ, ինչը փոքրամասնությունների ներկայացուցիչները բարյացակամորեն են մեկնաբանում: Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցներն ընդգծել են, որ չեն բախվել իրենց ազգության հիմքով

աշխատանքի հասանելիության առնչությամբ խտրականության կամ թշնամանքի որեւէ դրսեւորման՝ մասնավորապես հակասեմականության: Հայաստանը որպես հիշատակի օր նշում է Հոլոքոստի օրը (հունվարի 27-ը) եւ 2015 թվականին ճանաչել է 1915 թվականի ասորիների ցեղասպանությունը (*Սայֆո*):

49. Հիմնական դատողությունը, ըստ որի Հայաստանն էթնիկապես միատարր եւ միակրոն երկիր է, հանգեցնում է հիմնականում սեռական կողմնորոշմամբ պայմանավորված անհանդուրժողականության եւ խտրականության: Այլ կրոններ դավանող անձինք նույնպես թիրախավորվում են՝ աղանդներ համարվող նոր կրոնական շարժումների նկատմամբ առանձնակի ատելության դրսեւորմամբ: Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հակամարտությունն ու հայ ժողովրդի՝ անցյալում կրած տառապանքների ցավալի հիշողությունները սաստկացնում են մեկուսացումը, հայրենասիրական պարտքի զգացումն ու նացիոնալիզմը, որոնցից որոշ լրատվամիջոցներ օգտվում են: Թեեւ այս արձագանքներն անմիջականորեն ուղղված չեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց, սակայն դրանք ունեն գերիշխող տեսակետից տարբերվող տեսակետները բարձրաձայնելու հնարավորությունները սահմանափակելու ցավալի հետեւանք:

50. Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է, որ վերջին տարիներին Սիրիայից ավելի քան 20 000 էթնիկ հայեր եւ ասորիներ, ինչպես նաեւ որոշ քրդեր ու եզդիներ, իրենց ծագման երկրում ընթացող պատերազմից եւ հետապնդումից փախչելով, տեղափոխվել են Հայաստանի Հանրապետություն: Ներգաղթողների այդպիսի մեծ խմբի ժամանումը, որը երկրի բնակչության թվի նույնիսկ 1%-ը չէր կազմում, չընկալվեց թշնամանքով կամ վախով: Ընդհակառակը, մի շարք զրուցակիցներ Խորհրդատվական կոմիտեին տեղեկացրին, որ իշխանություններն ու քաղաքացիական հասարակությունը ջանքեր են գործադրել նրանց վերաբնակեցման հարցի կարգավորումը հեշտացնելու համար: Չնայած իշխանությունների կողմից մշակված աջակցության եւ ինտեգրման ծրագրերին եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես, օրինակ՝

աշխարհի խոշորագույն հայկական՝ շահույթ չհետապնդող կազմակերպության՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից տրամադրված նյութական աջակցությանը՝ ներգաղթողներից շատերն ունեն բնակարանային եւ աշխատանքային ոչ բավարար պայմաններ²⁴:

51. Մի շարք ազգային փոքրամասնություններ, մասնավորապես եզդիները եւ ռուսական մոլդկանները, արմատավորում են իրենց հայրենի ապրելակերպը, որը հիմնված է անասնապահության եւ գյուղատնտեսության վրա: Նրանցից շատերն ապրում են մեկուսացված լեռնային գյուղերում, որտեղ նրանք մի կողմից կարող են ավելի հեշտությամբ պահպանել իրենց ինքնությունը, մշակույթն ու ավանդույթները, մյուս կողմից շատ քիչ են շփվում բնակչության մեծամասնության եւ մյուս փոքրամասնությունների հետ²⁵: Այս բնակավայրերում կյանքի պայմանները շատ դաժան են, եւ դրանք ավելի են խորացնում չզարգացած ենթակառուցվածքները՝ հատկապես ճանապարհները, կոմունալ ծառայություններն ու տրանսպորտը, ինչպես նաեւ առողջապահական եւ այլ հիմնական հաստատությունները²⁶:

52. 2012 թվականի հուլիսին Հայաստանի ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածը փոփոխվեց՝ կանանց համար օրինական ամուսնական տարիք 17 տարեկանի փոխարեն սահմանելով 18 տարեկանը՝ նույն տարիքը, որը սահմանված է տղամարդկանց համար²⁷: Իշխանություններն այդ փոփոխությունը հիմնավորեցին որպես սեռային անհավասարությունը վերացնելու եւ երկիրը 1993

²⁴. Տե՛ս, օրինակ, «Փախստականներին ապաստանող երկիր. Երեւանը միջազգային օգնություն է փնտրում սիրիահայերի համար» www.armenianow.com/news/region/71009/armenia_syrian_refugees_crisis_nalbandian_agbu կայքում:

²⁵. Տե՛ս, օրինակ, «Եզդիների գյուղը Հայաստանում իր ինքնությունը վառ է պահում» www.rferl.org/media/photogallery/armenia-yezidi-minority-kurds/25023869.html կայքում:

²⁶. Տե՛ս «Երկար ժամանակ հետապնդումների ենթարկված եզդիների համար Հայաստանը երկրորդ հայրենիք է դարձել» <http://america.aljazeera.com/articles/2014/9/24/a-second-homeland.html> կայքում: (Վերնագիրը շփոթեցնող է, հոդվածում տրված է եզդիներով բնակեցված վայրերի դաժան կենսապայմանների մանրամասն նկարագրությունը):

²⁷. Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամ, «Երեխաների ամուսնությունը Հայաստանում (Համառոտ ակնարկ)» <http://eeca.unfpa.org/publications/child-marriage-armenia-overview> կայքում:

թվականին վավերացված²⁸ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1979 թվականի կոնվենցիային համապատասխանեցնելու միջոց: Այս փոփոխությունը նաեւ միտված է դյուրացնելու աղջիկների կրթությունը 12-ամյա կրթական համակարգին անցնելուց հետո, որը հայերն ավարտում են 18 տարեկանում: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ եզրի փոքրամասնության ներկայացուցիչները բողոքել են փոփոխության դեմ՝ պնդելով, որ դրանով խարխլվում են իրենց մշակույթն ու ավանդույթները, որոնց համաձայն կանանց խրախուսվում է վաղ ամուսնանալ, ինչը հանգեցնում է շատ վաղ տարիքում հղիության: Արդյունքում որոշակի զիջում է կատարվել, եւ 16-ամյա կնոջ համար նախատեսվել է ամուսնանալու հնարավորություն՝ ծնողների կամ օրինական հոգաբարձուի համաձայնությամբ:²⁹ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ չնայած մեծ է մշակույթի եւ ավանդույթի դերը, առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի այն հնարավորություններին, որոնք ապահովում են առկա ուսուցման հասանելիությունն ու այն ավարտելը:

53. Ընդհանուր առմամբ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ վարքագծի խիստ սոցիալական կանոնները եզրի տղամարդկանց եւ կանանց կյանքը թելադրում են միեւնույն ձեւով: Այնուամենայնիվ եզրի աղջիկներն ու կանայք հակված են առավել կաշկանդվելու պատերնալիստական դիրքորոշումներով եւ իրենց համայնքի ներսում սեռային հավասարության նկատմամբ հարգանքի բացակայությամբ: Եզրի երիտասարդ տղամարդիկ եւ կանայք հակված են դպրոցը շուտ թողնելուն, եւ ընտանիքների կողմից նախապես պայմանավորված ամուսնությունները դեռեւս համընդհանուր ընդունված սովորույթ են: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն ավստասանքով

²⁸. Տե՛ս «Հայաստանը բարձրացնում է նվազագույն ամուսնական տարիքը մինչեւ 18» <http://asbarez.com/104165/armenia-raises-minimum-marriage-age-to-18/> կայքում:

²⁹. Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի (ՄԱԿԲՀ) «Երեխաների ամուսնությունը Հայաստանում (Համառոտ ակնարկ)», էջ 3 <http://eeca.unfpa.org/publications/child-marriage-armenia-overview> կայքում:

նշում է, որ չկա այնպիսի մի հատուկ օրենսդրություն, որը կկարգավորեր հարկադիր ամուսնությունների հարցը³⁰:

54. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ չնայած մշակութային ավանդույթները եւ սովորույթները հարգելն ազգային ինքնագիտակցության կարեւոր բաղադրիչ է, դա չի կարող լինել մարդու իրավունքներից օգտվելու հաշվին: Իշխանությունները պետք է ընդունեն անհրաժեշտ օրենսդրություն եւ որդեգրեն քաղաքականություններ՝ ապահովելու համար, որ իրավունքները տրվեն բոլորին՝ անկախ սեռից, տարիքից եւ այլ դրությունից:

Առաջարկություններ

55. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան վերանայել օրենսդրությունը՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության եւ ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով:

56. Իշխանություններին առաջարկվում է իրականացնել գենդերային հավասարության եւ վաղ տարիքում հղիության հետ կապված առողջական ռիսկերի վերաբերյալ իրազեկության բարձրացման արշավներ, որոնք, մասնավորապես, ուղղված կլինեն խոցելի խմբերին, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին:

57. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին հորդորում է առաջնահերթությունը տալ այն մեկուսացված (մարգինալացված) տարածքների՝ հիմնական ենթակառուցվածքի, կոմունալ ծառայությունների եւ տրանսպորտի առումով տնտեսական զարգացմանը, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք: Պետք է տրամադրել

³⁰. Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների խորհրդի (ՄԱԿՄԻԽ) «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը Հայաստանում» <http://www.unitedhumanrights.org/2010/05/domestic-violence-against-women-in-armenia> կայքում:

առողջապահական եւ այլ հիմնական հաստատություններից կանոնավոր օգտվելու հնարավորություն:

Էթնիկական շարժառիթով կատարված հանցագործություն եւ ատելության քարոզչություն

58. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ներկայումս չկան հանցագործության վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալներ, որոնք տարանջատված են ըստ հանցավորի կատարած արարքի շարժառիթների: Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)³¹ ներկայացուցիչների կողմից զեկուցված տվյալների համաձայն՝ Հայաստանի վերաբերյալ նախորդ եզրակացությունն ընդունելուց ի վեր ատելության շարժառիթով կատարված որեւէ հանցագործություն չի գրանցվել: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ինչպես իշխանությունները, այնպես էլ մարդու իրավունքների ոլորտում գործող ՀԿ-ները համաձայնում են, որ ռասայական կամ էթնիկական շարժառիթով տեղի ունեցած դեպքերի թիվը շարունակում է մնալ ցածր:

59. Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով արգելվում է հրապարակայնորեն ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը, եւ տուգանքով պատժվում է ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված հայտարարություններ անելը: Լրատվության միջոցներ օգտագործելով, պաշտոնեական դիրքն օգտագործելով կամ կազմակերպված խմբի կողմից կատարված արարքի համար նախատեսվում է ավելի խիստ պատիժ: Ավելին, Քրեական օրենսգրքով ռասայական, ազգային կամ կրոնական ատելության շարժառիթը նախատեսված է որպես սպանության (քր. օր.-ի 104-րդ հոդված), ծանր կամ միջին ծանրության

³¹. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Ատելության շարժառիթով կատարված հանցագործության մասին զեկուցում. Հայաստան» <http://hatecrime.osce.org/armenia> կայքում:

մարմնական վնասվածք պատճառելու (քր. օր.-ի 112-113-րդ հոդվածներ), խոշտանգման (քր. օր.-ի 119-րդ հոդված) եւ գույքը դիտավորությամբ վնասելու (քր. օր.-ի 185-րդ հոդված) եւ դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելու (քր. օր.-ի 265-րդ հոդված) ծանրացնող հանգամանք: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ վերոնշյալ ծանրացնող հանգամանքները սահմանված են նեղ իմաստով եւ չեն ներառում, ի թիվս այլնի [*inter alia*], մաշկի գույնը, էթնիկական ծագումը կամ ազգային փոքրամասնությանը պատկանելությունը: Ավելին, դրանք տարածվում են բացառապես թվարկված լուրջ հանցագործությունների, սակայն ոչ բոլորի վրա (ներառյալ մարդուն առեւանգելը (131-րդ հոդված), բռնաբարությունը (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (139-րդ հոդված) եւ ավազակությունը (179-րդ հոդված)):

60. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ 2006 թվականին Հայաստանը վավերացրել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը վերաբերում է համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական եւ քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացմանը (ԵՊՇ թիվ 189)³²: Ցավոք, խախտելով արձանագրության դրույթները, չի ընդունվել օրենսդրություն, որով քրեականացվում են համակարգչային համակարգի միջոցով ռասիստական եւ քսենոֆոբիական նյութի տարածումը կամ այլ ճանապարհով հանրության համար այն մատչելի դարձնելը³³, ռասայով, մաշկի գույնով, ծագումով կամ ազգային կամ էթնիկական ծագումով, ինչպես նաեւ կրոնով տարբերվող խմբի պատկանելու համար անձանց կամ անձանց խմբին համակարգչային համակարգի միջոցով սպառնալը³⁴ կամ հրապարակայնորեն վիրավորանք հասցնելը³⁵:

³². www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/189:

³³. Նույն տեղում, 3-րդ հոդված. Համակարգչային համակարգերի միջոցով ռասիստական եւ քսենոֆոբիական նյութեր տարածելը:

³⁴. Նույն տեղում, 4-րդ հոդված. Ռասիստական եւ քսենոֆոբիական շարժառիթներով սպառնալիքը:

³⁵. Նույն տեղում, 5-րդ հոդված. Ռասիստական եւ քսենոֆոբիական շարժառիթներով վիրավորանք հասցնելը:

61. Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է, որ որեւէ պետական մարմին համացանցում վիրավորական բովանդակության նկատմամբ վերահսկողություն չի իրականացնում, եւ չի ստեղծվել վիրավորական բովանդակության առնչությամբ հաղորդում ներկայացնելու այնպիսի հատուկ մեխանիզմ, որի միջոցով կարող են ներկայացվել բողոքներ (ինչպես, օրինակ՝ համացանցում ատելության քարոզչության մասին հաղորդում ներկայացնելու համար թեժ գիծ):

Առաջարկություններ

62. Իշխանությունները պետք է վերանայեն քրեաիրավական դրույթները՝ ռասիստական եւ այլ հիմքերով ատելության շարժառիթները բոլոր հանցագործությունների համար ծանրացնող հանգամանք դարձնելու նպատակով:

63. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում ընդունել օրենսդրական դրույթներ՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարված ռասիստական կամ քսենոֆոբիական բնույթի արարքների դեմ պայքարելու համար: Իշխանությունները պետք է քննարկեն վերահսկողության եւ հաղորդումներ ներկայացնելու հատուկ մեխանիզմների ստեղծման հարցը:

Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդված

Լրատվական միջոցների մատչելիությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար

64. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ բավարար են գնահատում լրատվական միջոցների մատչելիությունը: Հայաստանի հանրային ռադիոն շարունակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով ամենօրյա հաղորդումներ հեռարձակել: Հաղորդումների տեւողությունը տատանվում է 30-ից

(առավել տարածված լեզուներից յուրաքանչյուրի, մասնավորապես ասորերենի, քրդերենի, ռուսերենի եւ եզդիերենի համար) մինչեւ 15 րոպեի (ավելի քիչ տարածում ունեցող լեզուների համար) միջեւ: Հույն ազգային փոքրամասնության ներկայացուցիչները Խորհրդատվական կոմիտեին տեղեկացրել են հունարենով ռադիոհեռարձակումը օրական 30 րոպե դարձնելու իրենց նախաձեռնության մասին:

65. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը հաղորդումներ չի պատրաստում ազգային փոքրամասնության լեզուներով, սակայն շարունակում է ցուցադրել ռուսերեն ֆիլմեր՝ հայերեն լուսագրերով: Շիրակի եւ Կոտայքի մարզերում որոշ մարզային հեռուստահեռարձակողների որոշ հաղորդումներ նվիրված են փոքրամասնությունների հետ կապված հարցերին: Կարելի է նաեւ նշել, որ ռուսերեն հաղորդումները լայնորեն հասանելի են կաբելային հեռուստատեսությամբ եւ արբանյակային կապով: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ օտարերկրյա հեռարձակումները չեն կարող որեւէ կերպ փոխարինել տեղական արտադրության հաղորդումներին, քանի որ դրանք պատշաճ ուշադրություն չեն դարձնում եւ չեն կարող դարձնել փոքրամասնությունների խնդիրներին եւ ընդհանուր առմամբ չեն նպաստում փոքրամասնությունների հետ կապված հարցերի վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացմանը: Հայաստանում թվային հեռարձակմանն անցնելու գործընթացն ավարտվել է 2016 թվականի հունվարի 1-ին, եւ ներկայումս թվային, ինչպես նաեւ անալոգային ազդանշանները սփռվում են ամբողջ երկրի տարածքով: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ իշխանությունները բնակչության ամենախոցելի խմբերին անվճար տրամադրել են հարյուր հազար թվային հեռարձակման ընդունիչ սարք: Այն նաեւ նշում է, որ հանրապետական մուլտիպլեքսի (1-ին մուլտիպլեքս) համար տիրույթի բաշխումից հետո հանրային հեռուստաընկերությունը ամբողջ երկրի տարածքով հեռարձակում է ինը հեռուստատեսային ծրագիր եւ չորս ռադիոծրագիր, Երեւանի մուլտիպլեքսներից (2-րդ, 3-րդ եւ 4-րդ մուլտիպլեքսներ) յուրաքանչյուրը Երեւան

քաղաքում եւ հարակից տարածքներում հեռարձակում է վեց հեռուստատեսային ծրագիր եւ չորս ռադիոծրագիր: Իշխանությունները Խորհրդատվական կոմիտեին տեղեկացրել են 2016 թվականի հունիսին նախատեսված՝ մասնավոր մուլտիպլեքսի համար տիրույթի բաշխման մասին: Հասանելի տեղեկությունների համաձայն՝ մրցութային հիմունքներով 20-ից մինչեւ 40 ալիքներ կտրամադրվեն հայտ ներկայացնողներին: Խորհրդատվական կոմիտեն սա համարում է իշխանությունների համար գերազանց հնարավորություն հետաքրքրություն առաջացնելու հնարավոր այն հեռարձակողների շրջանում, որոնք մտադրություն ունեն իրենց հաղորդումների մի մասը նվիրելու ազգային փոքրամասնությունների շահերի հետ կապված հարցերին, կամ որոնք հանձն են առնում հաղորդումներ հեռարձակել ազգային փոքրամասնությունների լեզուներով:

66. Իշխանությունների կողմից տրամադրված ֆինանսական աջակցությամբ Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող պարբերականները զգալիորեն մեծ թիվ են կազմում: Ռուսալեզու պարբերականներից են՝ *«Ռեսպուբլիկա Արմենիա»*, *«Ուրարտու»*, *«Գոլոս Արմենիի»*, *«Նովոյե Վրեմյա»* եւ *«Դելովոյ Էքսպրես»* թերթերը, ինչպես նաեւ այլ թերթեր եւ *«Լիպերալուրնայա Արմենիա»*, *«Երեւան»*, *«Աֆիշա»*, *«Արմյանկա»* ամսագրերը: Բացի դրանից, հրատարակվում են նաեւ եզդիերենով թերթեր՝ *«Լալըշ»*, *«Էզդիխանա»* («Եզդիների ձայնը»՝ հայերենով), քրդերենով թերթեր՝ *«Ռյա-Թազա»* («Նոր ուղի»), *«Միջագետք»* (հայերենով եւ քրդերենով), ուկրաիներենով *«Դնիպրո»* թերթը, ինչպես նաեւ հրեական համայնքի *«Մագեն Դավիթ»* («Դավթի աստղը»՝ ռուսերենով) թերթը եւ հունարենով *«Բյուզանդական ժառանգություն»* թերթը:

Առաջարկություն

67. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին առաջարկում է ապահովել, որ հանրային ռադիոն շարունակի պատրաստել եւ տարածել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ՝ Շրջանակային կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Այն իշխանություններին առաջարկում է նաեւ

հատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքներին՝ ապահովելով փոքրամասնությունների լեզուներով ռադիոհեռարձակման ու հեռուստահեռարձակման հնարավորություն եւ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները համարելով հայտ ներկայացնող՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին ռադիոհաճախականությունների եւ հեռուստաալիքների հատկացման ընթացակարգի չափանիշ:

Շրջանակային կոնվենցիայի 10-րդ հոդված

Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը

68. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ընդհանուր առմամբ, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի³⁶ համաձայն, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն դիմելու երկրի վարչական մարմիններ համապատասխան փոքրամասնության լեզվով՝ պայմանով, որ տրամադրվեն բոլոր փաստաթղթերի թարգմանությունները հայերենով: Այս պահանջով ֆինանսական բեռը դրվում է բացառապես ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա, եւ այդ իրավունքից օգտվելու առումով այն տարհամոզիչ է հնարավոր շահագրգիռ անձանց համար:

69. Ավելին, չկան օրենսդրական կամ վարչական դրույթներ, որոնցով տեղական պաշտոնատար անձանց կողմից պահանջվում կամ խրախուսվում է փոքրամասնությունների լեզուների օգտագործումը առնվազն այն համայնքներում, որտեղ բնակվող՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք զգալի

³⁶. Տե՛ս օրենքի 27-րդ հոդվածը՝ http://www.translation-centre.am/pdf/Translat/HH_orenk/Adm_Proceeding/Adm_Proceeding_en.pdf կայքում:

թիվ են կազմում: Հետեւաբար, վարչական մարմինների հետ հարաբերություններում ազգային փոքրամասնությունների լեզուներն օգտագործելու իրավունքը շարունակում է մնալ օրենքի՝ գործնականում ոչ կիրառելի դրույթ: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները չեն համարում, որ գործնականում խնդիրներ են առաջանում, քանի որ հայերենի լավ իմացությունը նրանց թույլ է տալիս իշխանությունների հետ արդյունավետորեն հաղորդակցվել: Մասնավորապես, ազգային փոքրամասնություններին պատկանող տարեց անձինք, որոնցից ոմանք հավանաբար կրթություն են ստացել Հայաստանից դուրս, կարողանում են հաղորդակցվել ռուսերենով, որը Հայաստանում շարունակում է մնալ շատերի համար հասկանալի լեզու:

Առաջարկություն

70. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կրկին կոչ է անում ապահովել, որ վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների համապատասխան օգտագործումը լինի արդյունավետ եւ պատշաճ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ պետք է անցկացվեն սերտ խորհրդակցություններ՝ վարչական մարմինների հետ հարաբերություններում ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման հետ կապված առկա պահանջները եւ կարիքները կանոնավոր կերպով ապահովելու համար:

Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդված

Տեղագրական նշանները

71. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ տեղագրական նշանների համար փոքրամասնությունների լեզուների օգտագործման հետ կապված իրավիճակը նախորդ եզրակացությունն ընդունելուց ի վեր

Հայաստանում չի փոխվել: Գործող կարգավորումներով նախատեսվում է, որ տեղագրական նշանները եւ ցուցանակները պետք է լինեն հայերենով եւ անգլերենով: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ փոքրամասնությունների լեզուներով այդպիսի նշանների առկա պահանջարկի վերաբերյալ խորհրդակցություն չի անցկացվել նույնիսկ տեղական մակարդակով՝ այն համայնքներում, որտեղ նրանք զգալիորեն մեծ թիվ են կազմում:

72. Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ 2015 թվականի դեկտեմբերին ընդունված սահմանադրական փոփոխություններով նախատեսվում է այնպիսի օրենքի ընդունում, որի համաձայն կմեծանա համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցության հնարավորությունը³⁷: Կարելի է, որ այդ օրենքով նախատեսվի առկա պահանջների եւ կարիքների, այդ թվում՝ տվյալ համայնքներում տեղագրական նշանների համար ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ խորհրդակցություն անցկացնելու հնարավորություն այն տարածքների բնակիչների համար, որտեղ բնակվող՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք զգալի թիվ են կազմում:

Առաջարկություններ

73. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում ընդունել անհրաժեշտ այնպիսի օրենսդրական դրույթներ, որոնք բնակիչներին թույլ կտան անմիջական մասնակցություն ունենալ համայնքի գործերի կառավարմանը եւ նպատակ կունենան խթանելու տեղագրական նշանների համար ազգային փոքրամասնությունների լեզուների հետ կապված առկա պահանջների եւ կարիքների վերաբերյալ խորհրդակցություններն այն համայնքներում, որտեղ բնակվող՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք զգալի թիվ են կազմում:

³⁷. Տե՛ս 182-րդ հոդվածը. «Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը» [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2015\)034-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2015)034-e) կայքում:

74. Իշխանություններին առաջարկվում է անցկացնել օրենքով առաջարկվող հնարավորությունների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված արշավներ եւ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղագրական նշաններ ներդնելու վերաբերյալ կառուցողական երկխոսության մեջ մտնել համայնքների եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ այն համայնքներում, որտեղ բնակվող՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները զգալի թիվ են կազմում:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդված

Կրթության մատչելիության հավասար հնարավորություններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար

75. Խորհրդատվական կոմիտեն հիշեցնում է նախորդ եզրակացություններում ներկայացված՝ եզրի եւ քուրդ երեխաների համար նախադպրոցական կրթության՝ ոչ պատշաճ մատչելիության վերաբերյալ իր դիտարկումները: Բացի դրանից, այդպիսի նախադպրոցական հաստատություններում ուսումնական պլանները, եթե դրանք առկա են, չեն համապատասխանում բազմալեզու համայնքի պահանջներին եւ այդ հաստատություններ հաճախող երեխաների տարատեսակ կարիքներին:

76. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրում»³⁸ հատուկ ուշադրության արժանացած հարցերից մեկը եղել է նախադպրոցական հաստատությունների ընդլայնումն այն տարածքներում, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնություններ: Իշխանություններն իրենց առջեւ առաջնային նպատակ են դրել 90%-ով

³⁸. Տե՛ս «2015 թվականի «Կրթություն բոլորի համար» ազգային վերլուծական զեկույց. Հայաստան», էջ 5 <http://unesdoc.unesco.org/images/0022/002299/229906E.pdf> կայքում:

բարձրացնելու նախադպրոցական հաստատությունների համալրումը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկան) երեխաներով: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Համաշխարհային բանկի միջոցով ստացված տվյալների համաձայն՝ նախադպրոցական կրթական ծրագրերում ընդգրկված 5-6 տարեկան երեխաների թիվը 2012-2013 ուսումնական տարում հասել է 65%-ի³⁹, եւ հետագայում ընդգրկվածության ցուցանիշն ավելի է բարձրացել՝ 2015 թվականին հասնելով 75%-ի: Այս ջանքերը ողջունելի են, սակայն դրանք ի հայտ են բերում մինչեւ կառավարության կողմից սահմանված նոր վերջնաժամկետը՝ 2017 թվականը, նախադպրոցական կրթական ծրագրերում ընդգրկվածության 90%-անոց ցուցանիշ ապահովելու մարտահրավեր:⁴⁰

77. Այդպիսի նախադպրոցական հաստատությունների ստեղծումը խթանելու նպատակով ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսող երեխաների դեպքում երեխաների պահանջվող նվազագույն թիվը նվազեցվել է մինչեւ 8-ը (ստանդարտ 25-ի փոխարեն): Հատկապես ողջունելի է 4-5 տարեկան 50 երեխաների համար նախադպրոցական կրթություն ապահովող՝ Գեղարքունիքի *մարզի* (վարչատարածքային միավոր) Գեղամասար, Արփունք, Փոքր Մասրիկ գյուղերում օտարերկրյա դոնորների ֆինանսական աջակցությամբ եզրիերենի դասերի կազմակերպումը: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ օտարերկրյա դոնորների հետ հույս կապելը չի կարող երկարատեւ կայուն լուծում լինել, եւ ցանկացած առաջընթաց կարող է վտանգի ենթարկվել այնպիսի արտաքին գործոնների պատճառով, որոնք դուրս են ազգային եւ տեղական մարմինների վերահսկողությունից:

78. Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է, որ ներկայումս վերանայվում է Պետական հանրակրթական ազգային ուսումնական պլանի⁴¹ պահանջներին

³⁹. 2006 թվականի 21.6%-ի համեմատ:

⁴⁰. Առավել մանրամասն տե՛ս Հայաստանի կրթության բարելավման ծրագիրը (2014 թվական) <http://documents.worldbank.org/curated/en/130121467994708193/pdf/831610PAD0P130010Box382153B000U0090.pdf> կայքում:

⁴¹. Տե՛ս «Հանրակրթության ազգային ուսումնական պլանը» www.ibe.unesco.org/curricula/armenia/ai_fw_2010_eng.pdf կայքում:

համապատասխանություն ապահովելու նպատակով 1-12-րդ դասարանների համար նախատեսված Ազգային ուսումնական պլանի շրջանակը: Խորհրդատվական կոմիտեն գնահատում է հատկապես այն, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց լեզուն եւ մշակույթը սովորելու իրավունքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն Ազգային ուսումնական պլանի հիմնական նպատակներից մեկն է: Ավելին, Ազգային ուսումնական պլանով նախատեսվում է, որ երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել «հարգել մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, լինել մարդասեր, հանդուրժող եւ քաղաքակիրթ վերաբերմունք դրսեւորել այլ ժողովուրդների ներկայացուցիչների եւ նրանց մշակույթների նկատմամբ»:

79. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այլ մշակույթների պատկանող եւ այլ լեզուներով խոսող երեխաների հետ ծանոթանալու նպատակով մի քանի դպրոցների կողմից արված մի շարք նախաձեռնությունները, ինչպիսիք են, օրինակ՝ ազգային փոքրամասնությունների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսները, Մայրենի լեզվի օրվա եւ Հանդուրժողականության միջազգային օրվա կապակցությամբ դասախոսություններ անցկացնելը: Ավելին, ազգային փոքրամասնությունների մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են հատուկ միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝ «Եզդիդի» գարնան զարթոնքի տոնը նշելը, «Ռուսաստան՝ եղբայր իմ», «Ես վրացի եմ, իսկ դու՝ հայ» եւ «Բացահայտում ենք Հունաստանը»: Չնայած ողջունելի են այդպիսի նախաձեռնությունները, սակայն դրանք հակված են սահմանափակելու ազգային փոքրամասնությունների ընկալումը միայն նրանց ֆոլկլորային ասպեկտներով՝ խորությամբ չգիտակցելով որպես հայ հասարակության մասնիկ՝ նրանց ունեցած ներդրումը: Ընդ որում, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները համարում են, որ այդպիսի նախաձեռնությունները պետք է լայն տարածում ունենան, քանի որ դպրոցներում քիչ ուշադրություն է դարձվում ազգային փոքրամասնությունների պատմությանը: Արդյունքում, փոքրամասնությունների պատկանող շատ

երեխաներ, ինչպիսիք են եզդիները եւ ռուսական մոլոկանները, ավելի քիչ տեղեկություններ ունեն իրենց պատմության մասին, քան Հայաստանի պատմության կամ «Հայ առաքելական եկեղեցու պատմության» մասին, որը դպրոցում դասավանդվում է որպես առարկա: Խորհրդատվական կոմիտեն հիշեցնում է նախկինում բազմիցս հնչեցրած իր տեսակետն այն մասին, որ ազգային փոքրամասնությունների՝ որպես հասարակության բաղկացուցիչ մասի պատմությունը պետք է դասավանդվի բոլոր դպրոցներում՝ իրենց երկրի մշակութային եւ էթնիկական բազմազանության վերաբերյալ երեխաների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար:

80. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն հատուկ դրամաշնորհային ծրագրի շարունակումը, որի համաձայն յուրաքանչյուր ազգային փոքրամասնությունից մեկ ուսանող կարող է ընդունվել Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետ կամ լեզվի կամ մշակութային մեկ այլ ֆակուլտետ՝ պարտավորված չլինելով հանձնել ընդունելության քննություններ⁴²: Ավելին, այդ ուսանողները կարող են օգտվել ուսման վարձից մասնակի ազատումից: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ եզդիական, քրդական եւ հրեական համայնքների ուսանողներն օգտվել են այս հնարավորություններից (արեւելագիտության ֆակուլտետի եզդի եւ քուրդ ուսանողները, Երեւանի պետական կոնսերվատորիայի հրեա ուսանողները):

Առաջարկություն

81. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին խրախուսում է շարունակել ջանքեր ներդնել հասարակական եւ միջմշակութային ուսումնական ծրագրերի մշակման ուղղությամբ եւ ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթը եւ պատմությունը պատշաճ մակարդակով ներկայացվեն եւ ուսուցանվեն բոլոր դպրոցներում, այդ թվում՝ այն դպրոցներում,

⁴². Տե՛ս «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված երրորդ պարբերական զեկույցը», 59-րդ պարբերություն, 2012 թվականի օգոստոսի 9, www.coe.int/t/dg4/education/minlang/Report/PeriodicalReports/ArmeniaPR3_en.pdf կայքում:

որտեղ հաճախում են մեծամասնությանը պատկանող երեխաներ, եւ որ դրանց միջոցով ազգային փոքրամասնությունների մշակույթները ներկայացվեն համակողմանիորեն՝ որպէս հայ հասարակության անբաժանելի մաս:

Շրջանակային կոնվենցիայի 14-րդ հոդված

Փոքրամասնությունների լեզուներով կրթություն ստանալը եւ դրանց ուսումնասիրումը

82. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ասորերենը, քրդերենը եւ եզդիերենը շարունակում են դասավանդվել եւ՝ տարրական, եւ՝ միջնակարգ դպրոցներում: 2015 թվականի տվյալների համաձայն՝ ասորերեն է ուսումնասիրում 557 երեխա Երեւանում եւ Արարատի, Կոտայքի ու Արմավիրի *մարզերում* (վարչատարածքային միավորներ) հիմնադրված վեց դպրոցներում: Քրդերեն է ուսումնասիրում 394 երեխա Արագածոտնի *մարզի* յոթ դպրոցներում: Եվ վերջապէս եզդիերեն ուսումնասիրում է 847 երեխա Արարատի, Արագածոտնի եւ Արմավիրի *մարզերում* գտնվող 23 դպրոցներում⁴³: Ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդվում են շաբաթական երկու ժամ, եւ դասարան կազմելու համար երեխաների նվազագույն թիվը սահմանված է 10-ը:

83. Ռուսերենի դասավանդման մասով նշվել է, որ Երեւանում, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Կոտայքի եւ Շիրակի *մարզերում* գտնվող 43 դպրոցներում բոլոր առարկաների ուսուցումը, բացառությամբ հայոց լեզվի, գրականության եւ պատմության, իրականացվում է այդ լեզվով: Ի լրումն դրա՝ 60 դպրոցներում անցկացվում են ռուսերեն ինտենսիվ դասընթացներ, իսկ մյուս բոլոր դպրոցներում ռուսերենը դասավանդվում է որպէս օտար լեզու:

⁴³. Տե՛ս «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված չորրորդ պարբերական զեկույցը», 59-րդ պարբերություն, 2012 թվականի օգոստոսի 9, www.coe.int/t/dg4/education/minlang/Report/PeriodicalReports/ArmeniaPR4_en.pdf կայքում:

84. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է իշխանությունների՝ փոքրամասնությունների լեզուներով դասագրքեր եւ ուսումնական նյութեր պատրաստելուն ուղղված ջանքերը: Ռուսերենով կրթություն տրամադրող դպրոցներում օգտագործվող դասագրքերը շարունակում են տպագրվել Հայաստանում: Ի լրումն դրա՝ լրացուցիչ ուսումնական նյութեր են ներմուծվում Ռուսաստանի Դաշնությունից: Դիտանցման ընթացիկ փուլում հրատարակվել են 2-րդ, 3-րդ եւ 4-րդ դասարանների համար քրդերենի դասագրքեր՝ 2012 թվականին, եւ 5-րդ, 6-րդ եւ 7-րդ դասարանների համար նախատեսված դասագրքեր՝ 2014 թվականին: Ինչ վերաբերում է եզդիերենին, 2-11-րդ դասարանների համար դասագրքեր են հրատարակվել 2011 եւ 2014 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում, եւ «Եզդիերեն այբուբենը» վերահրատարակվել է նաեւ 2014 թվականին: Վերջապես 1-ին դասարանի երեխաների համար՝ «Խոսիր ասորերեն» եւ 2-րդ դասարանցիների համար՝ «Գրիր եւ խոսիր ասորերեն» դասագրքերն են հրատարակվել 2010 եւ 2011 թվականներին:

85. Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում ուսումնասիրվում է պարսկագիտություն, արաբագիտություն եւ թուրքագիտություն: Այդ ֆակուլտետում նաեւ դասավանդվում է քրդերեն եւ ասորերեն: Ռուս բանասիրության ֆակուլտետում պատրաստվում են ռուսաց լեզվի եւ բանասիրության ոլորտի մասնագետներ: Խորհրդատվական կոմիտեն այնուամենայնիվ նշում է, որ առկա է ասորերենի, քրդերենի եւ եզդիերենի ուսուցիչների տեւական պակաս, որն առավել զգալի է հեռավոր տարածքներում՝ հիմնականում ոչ թե որակավորված մասնագետների պակասի պատճառով, այլ շահագրգռվածության եւ ֆինանսական խրախուսական միջոցների պակասի պատճառով:

86. Խորհրդատվական կոմիտեն ի վերջո նշում է, որ Երեւանի թիվ 74 դպրոցում խորությամբ դասավանդում է հունարեն եւ հունական պատմություն: Քանի որ տեղական մակարդակով հունարենի դասավանդման համար հատուկ

դասագրքեր չեն պատրաստվել, Հունաստանից ընդունվում են ուսումնական նյութեր: Ի լրումն դրա՝ մեկ նախադպրոցական հաստատությունում եւ մեկ կիրակնօրյա դպրոցում առաջարկվում են հունարենի դասընթացներ: Ավելի փոքրաթիվ համայնք ունեցող փոքրամասնությունները նույնպես ձեռնարկում են նմանատիպ քայլեր (մասնավորապես կիրակնօրյա դպրոցների կազմակերպում)՝ երեխաների համար իրենց փոքրամասնության լեզուն սովորելու հնարավորություններ ստեղծելու նպատակով:

Առաջարկություն

87. Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է իշխանություններին շարունակել իրականացնել իրավիճակի դիտանցում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցելու միջոցով պարզել, թե արդյոք փոքրամասնությունների լեզուներով կրթություն ստանալու եւ դրանք ուսումնասիրելու շրջանակը համապատասխանում է իրական պահանջներին, եւ անհրաժեշտության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ցանկացած թերություն շտկելու ուղղությամբ:

Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդված

Փոքրամասնությունների ներկայացվածությունն ընտրովի մարմիններում

88. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունները շարունակում են մեծ հետաքրքրություն ցուցաբերել հասարակական-քաղաքական կյանքի նկատմամբ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ թեկնածուներ են մասնակցել 2013 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ ընտրվել են ավագանու անդամներ եւ համայնքների ղեկավարներ: Երեւանում ավագանու անդամների՝ ազգությամբ եզդի եւ վրացի թեկնածուներ ընտրվել են ավագանու անդամներ: Մի շարք գյուղերում ավագանու՝ եզդի, ասորի եւ քուրդ

փոքրամասնությունների ներկայացուցիչ անդամներն ավագանու կազմում մեծամասնություն են եւ արդյունավետորեն կառավարում են տեղական գործընթացները: Ազգային ժողովի ընտրություններում հույն փոքրամասնությանը պատկանող անձն ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր եւ զբաղեցնում է փոխնախագահի պաշտոնը:

89. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ նոր Ընտրական օրենսգիրքը ներկայումս քննարկվում է, եւ Քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորման ուղեցույցին համապատասխան՝ Ազգային ժողովում ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունը խթանելուն ուղղված հատուկ մեթոդներ են քննարկվում Վենետիկի հանձնաժողովի⁴⁴ փորձագետների հետ: Առանց կանխորոշելու վերջնական քննարկումներն ու դրանց արդյունքը՝ այս փուլում քննարկվող առաջարկն այն է, որ չորս ազգային փոքրամասնությունների խմբերի (եզդիներ, ռուսներ, ասորիներ եւ քրդեր) համար կապահովվի ներկայացվածություն՝ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 22-ի սահմանադրական փոփոխությունների 89-րդ հոդվածի 5-րդ մասի, որով նախատեսվում է, որ «Ազգային ժողովում տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին»:

90. Հավանություն տալով այս դրույթներին, որոնք վկայում են Հայաստանի հասարակական եւ քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների ներկայության եւ նրանց կարեւոր ներդրման մասին, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ցավոք ներկայումս քննարկվող համակարգն ազգային փոքրամասնություններին բաժանում է երկու խմբի՝ չնայած նրան, որ նման բաժանումը հիմնված է ժողովրդագրական հստակ չափանիշների վրա (մանրամասների համար տե՛ս 17-րդ հոդվածը): Դա ի հայտ է բերում Հայաստանում ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավասար վերաբերմունքի հետ կապված հարցեր: Այս համատեքստում հարկ է նշել, որ ըստ

⁴⁴. «Քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորման ուղեցույց», 137-138-րդ պարբերություններ, փաստաթղթի հերթական համարը՝ CDL-AD(2010)024, [www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)024-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)024-e) կայքում:

Խորհրդատվական կոմիտեի գրուցակիցների՝ գործընթացի որեւէ փուլում քննարկում չի անցկացվել ո՛չ Ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի, ո՛չ Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի հետ: Սա նույնպես շատ ցավալի է:

91. Ի վերջո, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ մտահոգություն են հայտնել, որ իրենց ներկայացնող հետագա թեկնածուներից թեկնածություն ներկայացնելու համար պահանջվելու է հանձնել հայերենի քննություններ, եթե նրանք չեն սովորել հայալեզու դպրոցներում: Հաշվի առնելով, որ հայերեն դասավանդվել է Հայաստանի բոլոր դպրոցներում, նույնիսկ մինչեւ պետության անկախացումը՝ 1991 թվականին, այդպիսի միջոցը կարող է համարվել անհիմն եւ ոչ անհրաժեշտ:

Առաջարկություն

92. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում Ընտրական օրենսգրքի՝ ազգային փոքրամասնություններին առնչվող առաջարկված դրույթները վերանայելու համար խորհրդակցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ Ազգային ժողովում ազգային փոքրամասնությունների արդյունավետ ներկայացվածությունն ապահովելու նպատակով:

Խորհրդատվական մեխանիզմները

93. Ներպետական մակարդակում գործող հիմնական խորհրդատվական մարմնի՝ Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի կազմի եւ գործունեության վրա ազդող որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: Խորհրդատվական կոմիտեն դրական է արձագանքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից տրամադրված այն

տեղեկություններին, որոնց համաձայն Խորհրդի գործունեության թափանցիկության մակարդակը բարձրացել է՝ հատկապես ընթացակարգային այն հստակ կանոնների եւ օբեկտիվ չափորոշիչների հարցում, որոնք կիրառվում են ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին պետական ֆինանսական հատկացումներ կատարելու նկատմամբ (տե՛ս նաեւ 5-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված մեկնաբանությունը): Համակարգող խորհուրդը սերտորեն համագործակցում է Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի հետ, որը համակարգում է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ պետական քաղաքականությունը եւ, իր հերթին, ազգային փոքրամասնությունների խնդիրները ներկայացնում է տարբեր պետական մարմինների: Խորհրդատվական կոմիտեի տարբեր զրուցակիցներ ընդհանուր առմամբ իրենց գոհունակությունն են հայտնել Համակարգող խորհրդի գործունեության եւ դրա՝ պետական մարմինների հետ համագործակցության կապակցությամբ:

94. Իշխանությունները խորհրդակցել են Համակարգող խորհրդի հետ, որը դիտանցման ընթացիկ փուլում կարող է մեկնաբանություններ ներկայացնել պետական զեկույցի նախագծի վերաբերյալ: Այնուամենայնիվ նշվել է, որ Խորհրդի հետ չեն քննարկվել Ընտրական օրենսգրքի նախագծի այն դրույթները, որոնք առնչվում են ազգային փոքրամասնություններին: Ավելին, այն չի տեղեկացվել առաջարկված բովանդակության եւ այն ընթացակարգի մասին, որին համապատասխան պետք է մշակվեր ազգային փոքրամասնությունների վերաբերյալ օրենք, ինչպես նախատեսված է 2015 թվականի դեկտեմբերի 22-ի սահմանադրական փոփոխությունների 54-րդ հոդվածով:

Առաջարկություն

95. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին կապ հաստատել Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի հետ՝ դրա ներկայացուցիչներին կանոնավոր կերպով ազգային փոքրամասնությունների

վերաբերյալ օրենսդրության մշակման գործընթացում ներգրավելու համար ամենից նպատակահարմար ձևերը գտնելու եւ մշակման հիմնական փուլերում Խորհրդի ամբողջ կազմի հետ խորհրդակցելու նպատակով:

Շրջանակային կոնվենցիայի 16-րդ հոդված

Տարածքային բարեփոխումը

96. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ 2015 թվականի վերջին Հայաստանի Հանրապետությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (ԵՊՇ թիվ 122) վավերացման պահին ներկայացված վերապահումներից հրաժարվել է՝ այդպիսով պարտավորվելով պահպանել խարտիայով նախատեսված բոլոր դրույթները: Ավելին, 2013 թվականին այն վավերացվել է Տարածաշրջանային ժողովրդավարության Ուտրեխտի շրջանակային փաստաթուղթը⁴⁵, որով կարգավորվում են տարածքային մարմինների ժողովրդավարական համակարգը, դրանց գործունեության կազմակերպումը, իրավասությունները եւ ռեսուրսները, պետության մեջ դրանց տեղը, այլ մարմինների հետ հարաբերությունները եւ նրանց հարաբերությունները քաղաքացիները հետ:

97. 2010 թվականի համար նախատեսված վարչական բարեփոխումը չի իրականացվել, եւ կառուցվածքային խնդիրները շարունակում են իրենց ազդեցությունը թողնել կենտրոնական մարմինների եւ տարածքային մարմինների միջեւ հարաբերությունների վրա: Փաստացի բազմաթիվ փոքր տարածքային մարմիններ շարունակում են գործել այնպես, որ սահմանափակում են ծառայությունների մատուցման՝ տարածքային մարմնի կարողությունները:

⁴⁵. Անկայուն ժամանակներում արդյունավետ տեղական եւ տարածաշրջանային կառավարման վերաբերյալ Ուտրեխտի հռչակագիրը. փոփոխությունների մարտահրավերը [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&Ref=MCL\(2009\)12&Language=lanEnglish&Ver=original&Site=DG1-CDLR&BackColorInternet=B9BDEF&BackColorIntranet=FFCD4F&BackColorLogged=FFC679&direct=true](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&Ref=MCL(2009)12&Language=lanEnglish&Ver=original&Site=DG1-CDLR&BackColorInternet=B9BDEF&BackColorIntranet=FFCD4F&BackColorLogged=FFC679&direct=true) կայքում:

Խորհրդատվական կոմիտեն հիշեցնում է իր երրորդ եզրակացության մեջ արտահայտած մտահոգությունների մասին, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների կողմից բնակեցված փոքր համայնքները մեծամասնություն կազմող հայ բնակչություն ունեցող հարեան համայնքների հետ միացնելու հնարավոր հետեանքներին: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է 2014 թվականի մարտի 26-ին Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից ընդունված՝ «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» 351 (2014)⁴⁶ առաջարկությունը, որը պարունակում էր մի շարք հատուկ առաջարկություններ՝ ուղղված, *inter alia*, համայնքային խորհուրդների կարողությունների հզորացմանը՝ այն բոլոր հարցերի հետ կապված, որոնք վերաբերում են նրանց իրավասություններին՝ ստեղծելով պաշտոնական խորհրդակցության մեխանիզմ, որը կապահովի, որ տեղական իշխանությունների եւ տեղական իշխանությունների ազգային միությունների հետ պատշաճ կերպով քննարկվեն այն հարցերը, որոնք անմիջապես իրենց են վերաբերում:

Առաջարկություն

98. Խորհրդատվական կոմիտեն վերահաստատում է իր կոչն իշխանություններին՝ ապահովելու, որ տարածքային բարեփոխումների քաղաքականություն մշակելիս եւ իրականացնելիս ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները պատշաճ կերպով հաշվի առնվեն, եւ որ այդ բարեփոխումները բացասաբար չանդրադառնան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հասարակական-քաղաքական կյանքին արդյունավետ մասնակցության իրավունքի վրա: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է արդյունավետորեն խորհրդակցել գործընթացի բոլոր փուլերում:

⁴⁶. Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում, առաջարկություն 351 (2014) <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&id=2170873&Site=COE&direct=true> կայքում:

Շրջանակային կոնվենցիայի 18-րդ հոդված

Անդրսահմանային համագործակցությունը

99. Խորհրդատվական կոմիտեն դրական է արձագանքում այն փաստին, որ Հայաստանը շարունակում է համագործակցել հարեան եւ այլ երկրների հետ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն առնչվող հարցերով: Այն այս համատեքստում հիշեցնում է, որ Հայաստանը ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ մի քանի երկկողմ պայմանագրերի եւ մշակութային համաձայնագրերի կողմ է (Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Ղազախստանի, Լիբանանի, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության եւ Ուկրաինայի հետ): Այնուամենայնիվ Կոմիտեն մտահոգություն է հայտնում այն փաստի առնչությամբ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին եւ «շփման գծում» տեղի ունեցած դեպքերը շարունակում են խարխլել տարածաշրջանում խաղաղություն հաստատելուն ուղղված ջանքերը, եւ հիշատակում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ ռազմական գործողությունները դադարեցնելու եւ բանակցային գործընթացին վերադառնալու մասին բոլոր կողմերին վերջերս ուղղված կոչը⁴⁷:

Առաջարկություն

100. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին առաջարկում է համագործակցության քաղաքականություն վարել հարեան երկրների հետ բոլոր այն հարցերի առնչությամբ, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը, եւ շարունակել ջանքերը՝ ուղղված տարածաշրջանում տեւական խաղաղություն հաստատելուն:

⁴⁷. Տե՛ս «ԵԱՀԿ բոլոր մասնակից պետությունները քննարկում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում վերջին շրջանի էսկալացիան» www.osce.org/cio/231431 կայքում, 2016 թվականի ապրիլի 5, եւ «ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների ներկայացուցիչների հայտարարությունը» <http://www.osce.org/mg/231386> կայքում, 2016 թվականի ապրիլի 5:

III. Եզրակացություններ

101. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իր ամփոփիչ դիտողությունները եւ առաջարկությունները կարող են հիմք ծառայել Նախարարների կոմիտեի կողմից ընդունվելիք՝ Հայաստանի Հանրապետության կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ բանաձեւի համար:

102. Իշխանություններին առաջարկվում է հաշվի առնել Խորհրդատվական կոմիտեի չորրորդ եզրակացության I եւ II բաժիններում ներառված մանրամասն դիտարկումները եւ առաջարկությունները⁴⁸: Իշխանությունները, մասնավորապես, պետք է ձեռնարկեն Շրջանակային կոնվենցիայի իրականացման հետագա բարելավմանն ուղղված հետեւյալ միջոցառումները՝

Անհապաղ գործողություններ պահանջող առաջարկություններ⁴⁹

- **«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը եւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքներից օգտվելու վրա ազդեցություն ունեցող այլ օրենսդրություն մշակելուց առաջ եւ դրա ընթացքում իրականացնել քաղաքացիական հասարակության եւ ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ լայնածավալ խորհրդակցությունների գործընթաց, ապահովել այդ օրենսդրության՝ միջազգային չափանիշներին լիակատար համապատասխանությունը.**
- **մշակել նախաձեռնողական մոտեցում՝ Շրջանակային կոնվենցիային համապատասխան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու համար, ապահովել, որ Շրջանակային**

⁴⁸. Բանաձեւի նախագծում պետք է հղում կատարվի եզրակացությանը՝ նախքան այն Մարդու իրավունքների հարցերով զեկուցող խմբին ներկայացնելը:

⁴⁹. Ստորեւ ներկայացված առաջարկությունները նշված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հաջորդականությամբ:

կոնվենցիայի համաձայն իրավունքներից օգտվելուն առնչվող քաղաքականությունները մշակվեն փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության միջոցով՝ նրանց իրական կարիքներն արտացոլելու նպատակով.

- կրկնապատկել եզրի երեխաների, հատկապես աղջիկների առջեւ ծառայած՝ կրթության մատչելիության հետ կապված դժվարություններն առանց հետագա ձգձգումների վերացնելուն ուղղված ջանքերը, շարունակել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության ապահովմանն ուղղված ջանքերը, մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան վերանայել օրենսդրությունը՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության, ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով.
- խորհրդակցել ազգային փոքրամասնությունների տեղական ներկայացուցիչների հետ վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուներն օգտագործելու եւ մեծ թվով՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված աշխարհագրական տարածքներում տեղագրական նշանների անհրաժեշտությունը գնահատելու համար, իրականացնել իրազեկության բարձրացմանն ուղղված արշավ՝ խրախուսելով տեղական կառավարման մարմինների հետ շփվելիս փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

Հետագա առաջարկություններ⁵⁰

- ապահովել, որ հետագա մարդահամարների, ինչպես նաեւ այլ կերպով տվյալների հավաքագրման համար առկա լինեն համապատասխան

⁵⁰. Ստորեւ ներկայացված առաջարկությունները նշված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հաջորդականությամբ:

ընթացակարգեր, որպեսզի հնարավոր լինի տրամադրել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց դրության վերաբերյալ հավաստի տվյալներ, ապահովել մեկից ավելի էթնիկ պատկանելություն նշելու հնարավորություն՝ կիրառելի միջազգային ստանդարտներին համապատասխան.

- խրախուսել փոքրամասնությունների տարբեր խմբերի միջև դրական հարաբերությունները, ստեղծել ու խթանել եզրի եւ քուրդ փոքրամասնությունների միջև երկխոսության հնարավորությունները.
- ապահովել, որ Մարդու իրավունքների պաշտպանն ունենա «Խտրականության արգելքի մասին» օրենքի շրջանակներում իրեն վերապահված նոր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները.
- վերանայել քրեական օրենսդրությունը՝ ռասայական եւ այլ հիմքերով ատելության շարժառիթները բոլոր հանցագործությունների համար ծանրացնող հանգամանք դարձնելու նպատակով, ընդունել համակարգչային համակարգի միջոցով ռասիստական կամ քսենոֆոբիական բնույթի նյութեր տարածելը կամ այլ ճանապարհով դրանք հասանելի դարձնելը եւ համացանցում ատելություն տարածող արարքները քրեականացնող օրենսդրական դրույթներ, իրականացնել ատելություն հարուցելու հանցագործության տարբեր ձեւերի մասին հասարակության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված իրազեկման արշավներ եւ ստեղծել մատչելի մեխանիզմներ՝ ատելություն հարուցելու հանցագործության մասին հայտնելու համար.
- ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթը եւ պատմությունը պատշաճ մակարդակով ներկայացվեն եւ ուսուցանվեն բոլոր դպրոցներում, այդ թվում՝ այն դպրոցներում, որտեղ հաճախում են մեծամասնությանը պատկանող երեխաներ, եւ որ դրանց միջոցով ազգային

փոքրամասնությունների մշակույթները ներկայացվեն համակողմանիորեն՝ որպես հայ հասարակության անբաժանելի մաս.

- ապահովել, որ հանրային ռադիոն շարունակի պատրաստել և տարածել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ՝ Շրջանակային կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն, ինչպես նաև ապահովել փոքրամասնությունների լեզուներով ռադիոհեռարձակման ու հեռուստահեռարձակման հնարավորություններ և փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները համարել հայտ ներկայացնող՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին ռադիոհաճախականությունների և հեռուստաալիքների հատկացման ընթացակարգի չափանիշ.
- Ընտրական օրենսգրքի՝ փոքրամասնություններին առնչվող առաջարկված դրույթները վերանայելու նպատակով խորհրդակցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ Ազգային ժողովում ազգային փոքրամասնությունների արդյունավետ ներկայացվածությունն ապահովելու նպատակով: